Azg

Azg armenian daily

18 ՅՈՒՆՈՒԱՐ 1996 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 8 (1014)

Կոմկուսի թեկնածու Գենադի Սելեզնյովը՝ Ռուսաստանի Պետդումայի նախագահ

ՍՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ. Հունվարի 17-ին իր աշխատանքը շարունակեց Ռուսաստանի Պետդումայի առաջին նստաշրջանը: Շեյենական իրադարձությունների բուռն ինֆարկումներից հետո խորհրդարանի ստորին դահլիճը վերջին անգամ ընտրեցին նախագահի ընտրությանը: Կրկին ա ռաջադրվեց չորս թեկնածու՝ Գենադի Սելեզնյովը, Իվան Ռիբկինը, Վլադիմիր Ժիրինովսկին եւ Վլադիմիր Լուկինը: Ինչպես եւ նախորդ օրը, Ժիրինովսկին վերջին պահին հանեց իր թեկնածությունը: Չայների մեծամասնությամբ Ռուսաստանի Դաշնության Պետդումայի նախագահի ընտրվեց կոմունիստական կուսակցության թեկնածու, 48 ամյա Գենադի Սելեզնյովը:

Իսրայելի նախագահ Վայցմանը չի ներում գերմանացիներին

ԲՈՆՆ 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ ՕՐԱ. Շոռեֆաբթի ավարտվեց Իսրայելի նախագահ էզեր Վայցմանի խառարյա այցը Գերմանիա: Բունդեսագում արտասանած իր ճառում նա հայտարարեց, որ չի կարող ներել Գերմանիային՝ երկրորդ աշխարհամարտի զոհ 6 մլն հրեաների անունից:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Նախագահ Քլինթոնն ընդունեց Գարեգին կաթողիկոսին

«Սբ. Գր. Լուսավորիչ» շքանշան ԱՄՆ-ի նախագահին

Վաշինգտոնից երեկ մեր ստացած հեռագրագրերը հաղորդում են, որ Գարեգին Ա Ամենայն հայոց հայրապետը Ս. Նախանգ մեկնում իր առաջին հովվապետական այցի՝ ընթացքում հունվարի 16-ի հեսմիջօրեին ընդունվել է նախագահ Բիլ Քլինթոնի կողմից: Ընդունելությանը վեհափառ հայրապետի կողքին ներկա էին գտնվել Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ խաժակ արք. Պարսամյանը եւ Ս. Նահանգներում ՀՅ դեսպան Ռուբեն Շուգարյանը: Երկուշաբթի օրը Վեհափառը հանդիպել է Հանրապետական բանկի ղեկավարների հետ եւ շնորհակալություն հայտնել նրանց Հայաստանին ցուցաբերվող ֆինանսական օգնության համար: Վաշինգտոնում իր կեցության ընթացքում Վեհափառը հարցազրույց է շնորհել «Վաշինգտոն բաստ» թերթի թղթակից Լերի Ռիհանային: Թերթի հունվարի 16-ի համարում լույս տեսած հարցազրույցում, որտեղ Գարեգին Ա կաթողիկոսը ներկայացվել է որպես «64 ամյա կարող եւ ուժեղ գիտնական եւ եկեղեցու դիվանագետ», խոսվել է անցյալ հուլիսին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրությունների եւ հանրաքվեի, ինչպես նաեւ Հայ եկեղեցու դերի մասին: Նորին Ս. Օծությունը ասել է, թե երբ որ հայերն ավելի խորը ըմբռնեն իրենց ստացած հիսունհնգամյա բարոյական ժառանգությունը, «այդ արժանապատվության ոգին դառնալու է ստեղծագործական եւ առաջնորդության ուժ, որն իր ազդեցությունն է թողնելու նաեւ տնտեսական կյանքում»: Կաթողիկոսը, բնականաբար, այցելել է նաեւ Վաշինգտոնի հայոց Ս. Աստվածածին եկեղեցի, որտեղ ընդունվել է հրաշափառով, որից հետո հանդիպում է ունեցել տեղի երիտասարդական կազմակերպությունների հետ:

Տես # էջ 2

Լ. Տեր-Պետրոսյանը կմեկնի Մոսկվա

Այսօր առավոտյան Հայաստանի պետական պաշտոնական պատվիրակությունը՝ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ կմեկնի Մոսկվա՝ մասնակցելու ԱՊՀ երկրների ղեկավարների հերթական գագաթաժողովին:

Պատվիրակության կազմում են նաեւ վարչապետ Հրանտ Բագրատյանը, արտգործնախարար Վահան Փափազյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, ԱՊՀ, Եվրամիության եւ միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ կապերի գծով նախարար Գագիկ Շահբազյանը: Նույն օրը նախատեսվում է Հայաստանի նախագահի հանդիպումը ՌԴ նախագահ Բորիս Ելցինի հետ:

Նախագահը հավանություն է տվել Արմենպրեսի աղաղեսականացման գաղափարին

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Արմենպրեսը պետք է դառնա բաժնետիրական ընկերություն», Նոյյան տապան գործակալության թղթակցին ասաց Արմենպրես պետական լրատվական գործակալության տնօրեն Տիգրան Հակոբյանը: Ըստ տնօրենի, այս մասին դեռեւս չկա կոլեկտիվի որոշումը, սակայն գաղափարն արժանացել է ՀՀ նախագահի հավանությանը: Տ. Հակոբյանի կարծիքով, ՀՀ վարչապետը նույնպես կողքունի այդ գաղափարը: Ներկայումս մշակվում է համապատասխան կանոնադրություն, որը պետք է ներկայացվի կառավարություն: Տ. Հակոբյանի հաղորդմամբ, աղաղեսականացումը կնպաստի ներկայումս պետական դրամաշնորհներին սովոր տեղեկատվական միջոցների աշխատանքի բարելավմանը: «Նույնը պետք է վերաբերի նաեւ պետական ռադիոյին եւ հեռուստատեսությանը», ասաց Արմենպրեսի տնօրենը: Նրա կարծիքով, պետք չէ ունենալ այն մտավախությունը, թե աղաղեսականացված լրատվության աղբյուրները չեն կարող ծառայել պետության շահերին:

ՍԱՀՄԵԿՈՒԹՅՈՒՆ

«Գրադները» կլուծե՞ն չեչեն գրոհայինների հարցը

Քասաեւականները ապառնում են Բուքիոռում պայթեցնել գրաված նավը

Երեկ ՌԴ հանդեսական անվտանգության ծառայության մասնագիտական կենտրոնի տնօրեն Ա. Միխայլովը, մեկնաբանելով «Գրադ» կայանքներից եւ օդուժի կողմից Պերվոմայսկի գանգվածային ռմբակոծման փաստը, նշեց, որ ստացված տեղեկությունների համաձայն, չեչեն գրոհայիններն հաշվեհարար են տալիս բոլոր պատանդների հետ եւ ուսի երկելով դրանից, որոշում ընդունվեց օգտագործել գրոհայիններին ոչնչացնելու վերոհիշյալ տարբերակը: Միխայլովը հայտնեց, որ հանդիսական ուժերի կրակոցը կազմում է 6 զոհ եւ 38 վիրավոր: Նա հավելացրեց, որ նույն օրը Պերվոմայսկը վերջնականապես կմաքրվի գրոհայիններից: Միխայլովի խոսքին բոլորելով գրոհայինների կողմից պատանդների ոչնչացման վտանգի խնդրությունը, հարկ նշի հարմարում նշել, որ Պերվոմայսկում հոգս ցնցեց ՌԴ ռազմական մեքի ու ոստի շարքը նախկինում ստեղծված անհարկելիության եւ բարձր դրդիչներ նոսկիրի դատարանի: «Ասոշիեյթեդ պրես» գործակալության հաղորդագրությամբ, հանդիսական ուժերը մեծ կորուստներ են կրել: Թրանսպորտ գործակալության թղթակիցը, որը մարտական գործողությունների վայրից գտնվում էր ոչ շատ հեռու, նշել է, որ 5 ռազմի ընթացքում «Գրադ» կայանքներից 8 հանգամանք է տվել Պերվոմայսկի վրա: Միջազգային կարմիր խաչի ներկայացուցիչ Կիմ Բարսենգերը դիմել է ռուսական իշխանություններին, խնդրելով Պերվոմայսկում տուժածներին բժշկական օգնության գույց տալու հնարավորությունը: Սակայն դրական չի ստացել: Մինչեւ ուշ երեկո շարունակվում էին մարտական գործողությունները:

Բացատրելով դիրքորոշումների էության դեմ Ասլան Մասխադովի հանձնարարած ահաբեկչական գործողությունների սկզբնական մասին հարցը, չեչեն գրոհայիններ երեքշաբթի խոսեցնացին հերթական ահաբեկչական գործողություն, այս անգամ արդեն Թարհիայի տարածքում, բիրսխ բնակելով Տրապիզոն Սոչի երթուղային «Ավրասիա» ֆերմանավը: Շուրջ 50 գրոհայիններ երեկոյան զինված բարձանցելով ֆերմանավ, որպեսզի վերջին այնտեղ գտնվող 150 ուղեւորներին, որոնցից 95-ը ՌԴ քաղաքացիներ են եղ, 9-ը ուկրաինացի, 5-ը վրացի, 2-ը կիրգիզ, 37-ը թուրք եւ անձնակազմի 40 անդամներ: Թռիչքուղղության ժամանակ վիրավորվել է նավի վահանգտի ռադիոկապավորը: Ուղեւորներից մեկին Նաղեժդա Նասկովային հրաշքով հաջողվել է փրկվել, որը եւ դրամից ահաբեկիչների կողմից մեկ ուղեւորի գնդակահարման եւ մի քանիսին վիրավորելու վրաստի մասին: Ահաբեկիչների դեկավարը Թարհիայի հաղորդագրի ոմն Մահմոդ Թաշիչանը հայտնել է, որ իրենց գործողությունը ուղղված է միայն Ռուսաստանի դեմ: Նա նշել է, որ իրենք Բասաեւի գրոհայիններն են, ենթարկվում են միայն նրա հրամանին եւ դահանջել է հանձնաժողովական զորքերը դուրս բերել Չեչնիայից եւ բոլոր Ռադոեի խմբին անվտանգ հեռանալու Պերվոմայսկից: Հանդիսական դեպքում ահաբեկիչը խոստացել է ոչնչացնել բոլոր ռուս ուղեւորներին եւ դայթեցնել նավը Բուքիոռի ներքեւում: Նրա հրամանով նավը ուղղություն է վերցրել Սամսուն, որտեղ Թաշիչանը կարեւոր հայտարարություն անելու հարմար գանգրաբարի է հայտնել հանձնիոնել լրագրողների, այդ թվում նաեւ ՌԴ իշխանությունների ներկայացուցիչների հետ:

ՌԴ ԱԳ նախարարության ներկայացուցիչ Կարասինը երեկ Սոչիում լրագրողների հարցերին հրամայված մասնի սարալիում իր դիրքորոշումն է հայտնել բարեկական իշխանություններին, մասնավորապես, որ ռուսական կողմը բացիցս է վերջինիս ուշադրությունը հրավիրել Թուրքիայի տարածքում Դաղստանի կողմնակիցների հանդեսական գործունեության վրա:

ԳԱՐԵԳԻՆ ԲՈՒԼԱՆԻՆՅԱՆ

ՍԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ

«Համասը» բոյկոտում է պաղեստինյան ընտրությունները

Ծայրահեղ իսլամական «Համաս» կազմակերպությունը, ինքնավար տարածքներում մեծ աշխատանք է ծավալել առանց ցինկա ընտրատարեքին պաղեստինյան խորհրդարանական առաջին ընտրությունները բոյկոտելու նպատակով: Կազմակերպությունը դեմ է Յասեր Արաֆաթի իշխանությունը օրինական հանգամանք տալուն: Սրուս կողմից, իսրայելցի 2 զինվոր դարանակալ սպանվեց Ջերոնում: Պատասխանատվությունը ոչ ոք դեռեւս չի ստանձնել, սակայն ամենը կասկածում են «Համասին»:

Սոցիալիստները փնտրում են Անդրեաս Պապանդրեուին փոխարինողի

ԱԹԵՆՔ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. AFP. Հունաստանի սոցիալիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն չորեքշաբթի որոշել է կուսակցության նոր ղեկավարի եւ վարչապետի թեկնածուի ընտրությունը դեպի հունվարի 18-ը: Ինչպես հայտնեցին Պապանդրեուի նախկին հարազատներ, Անդրեաս Պապանդրեուն հիվանդ է մնում: Ինչպես հայտնեցին Պապանդրեուի նախկին հարազատներ, Անդրեաս Պապանդրեուն հիվանդ է մնում: Ինչպես հայտնեցին Պապանդրեուի նախկին հարազատներ, Անդրեաս Պապանդրեուն հիվանդ է մնում:

Ամերիկյան հեռուստաընկերությունը խիստ է քարկոծել թուրքերին

Մեր նախանցյալ համարում հաղորդել էինք ամերիկյան CBS հեռուստաընկերության հայտնի «60 minuts» կիրակնօրյա ծրագրից Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարման կաղակցությամբ հնչած քննադատության մասին: Այդ հեռուստածրագիրը, ինչպես վկայում է Ասոշիեյթեդ պրեսը, որոշ գործակալության Անկարայից ուղարկված հաղորդագրությունը, խիստ է քարկոծել թուրքական կառավարությանը: Այնքան, որ արտաքին գործերի նախարարի տեղակալ Օնուր Օյմենն իր մոտ է հրավիրել ամերիկյան դեսպանատան ներկայացուցչին եւ բացատրություն պահանջել հեռուստածրագրում հակաթուրք նյութ մտցված ամերիկյան պաշտոնատարներից Ջոն Շաբաֆի հայտարարության առնչությամբ: Ինչ վերաբերում է CBS հեռուստաընկերությանը, որի սիրած ծրագրի առթիվ տված մամլո ասուլիսում «Օյմենն այն «անպատշաճ եւ վատ ժուռնալիզմի օրինակ» էր անվանել, հայտարարեց, որ հասատս է մնում իր տեսակետի մեջ, ավելացնելով, որ ամերիկյան պաշտոնատարներն իրենց սպաս կամքով եւ գիտությամբ էին մասնակցում ծրագրին:

Հիշեցնենք, որ թե Շաբաֆը եւ թե ամերիկյան մեկ ուրիշ պաշտոնատար Ջոն Կոսելլան վերոհիշյալ ծրագրում ենթադրաբար էին տարբերակել Թուրքիայում եւ Իրանում բնակվող հրեաների նկատմամբ Մ. Նահանգների հարաբերությունը, միաժամանակ հաստատելով, որ հրեաների տեսակետությունը տարածված եւրոպա է Թուրքիայում:

Վերջում ավելացնենք, որ Թուրքիայի արտգործնախարարի տեղակալը ենթադրել է հեռուստածրագրի որոշումներին Օպրաների գնված վայրը չբացահայտելու համար, թեեւ Թուրքիան միշտ ասում է, որ վերջինս գտնվում է Սիրիայում:

«ԳՐՈ» ԴԱՏ

«Չիրկիզվող պահարանի թղթերի մասին հայտնել է Ա. Արծրունին»

Ասում է ԱՄՆ հանձիշը

«Գրոի» գործով դատավարության նախորդ օրվա նիստում ցուցադրված տեսաձայնագրությունը լայն արձագանք առաջացրեց դատարանական կողմի մոտ: Ամերիկացի Արծրունու դատապարտյալ Ա. Ավագյանը, իսկ այնուհետեւ Ռ. Ռեսենին հանդես եկան հայտարարություններով, ընդգծելով, որ տեսաձայնագրում չկար չիրկիզվող պահարանը, որի շուրջ եղած աղմուկությունը դարձրեցին հարցաքննության առարկա: Ընդհանրապես ներկայացրածը ճանապարհի մասին չվերցրեցին, չցուցադրվեցին ոչ բնակարանի դուռը բացվելը, ոչ ճանապարհի բացվելը, որեւէ առարկա չկնքեցին, ցույց չտրվեց արձանագրության հանձնաժողովի եւ այլն: «Դրանց դատաքննությունը հնարավոր չէ իրականացնել, թե այդ բնակարանից են առգրավված», եզրափակեց փաստաբան Ռ. Ռեսենին, միաժամանակ հիշեցնելով տեսագրությանն առնչվող ԱՄՆ քննչ Գ. Վարդանյանի տեղեկանքի մասին, որով բացատրվում էր տեսագրությունը վերանայելու դատաքաղաքը, իսկ 12 օր հետո նոր տեսագրության է հայտնվում:

Տես # էջ 2

digitised by A.R.A.R.@

տեղական

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Նախագահ Քլինթոնն ընդունեց Գարեգին կաթողիկոսին

«Սբ. Գր. Լուսավորիչ» շքանշան ԱՄՆ-ի նախագահին

Սկիզբը էջ 1

Ինչ վերաբերում է նախագահ Քլինթոնի հետ ունեցած հանդիպմանը, որի մասին Սոֆիտակ տան մամուլի քարտուղարությունը հրապարակել է հաղորդագրություն, Ամենայն հայոց կաթողիկոսի ու Մ. Նահանգների նախագահի հանդիպումը տեւել է կես ժամ, որի ընթացքում նախագահն ու Հայ եկեղեցու ղեկը համամիտ են գտնվել, որ հայկական ոգին կրոնական ուժեղ հավատ, նախաձեռնության ոգի ու մեծ արիություն, օգնել է Հայաստանին հաղթահարելու խորհրդային վարչակարգի բողած ազդեցությունը եւ ոտի կանգնելու որպես անկախ ղեկություն:

Հանդիպման առիթով Ամենայն հայոց հայրապետը նախագահ Քլինթոնին է շնորհել «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը՝ հատկապես մեծածավալ օգնությունների միջոցով Հայաստանի անկախությանը նպաստելու գործում ցույց տված առաջնորդության համար: Նախագահն ընդգծել է այն հատուկ կապերը, որ գոյություն ունեն Մ. Նահանգների ու Հայաստանի միջեւ եւ իր պատրաստակամությունն է հայտնել խորացնելու այդ կապերը: Նախագահն ընդգծել է նաեւ այն հատուկ դերը, որ ունեցել են ամերիկահայերը Հայաստանի անկախ ղեկավարության զարգացման գործում:

Նախագահն ու կաթողիկոսը քննարկեցին իրենց խոր մտահոգությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության եւ կովկասում տիրող իրավիճակի շուրջ: Թե նախագահը եւ թե Նորին Սուրբ Օծությունը, ինչպես կարդում ենք հաղորդագրության մեջ, շեշտեցին խաղաղություն հաստատելու ուղղությամբ վերանորոգ ջանքերի կարեւորությունը: Երկուսը համաձայն գտնվեցին, շարունակում է Սոֆիտակ տան հաղորդագրությունը, որ Կովկասի եւ նրա հարեւան երկրների միջեւ ընդլայնված տարածաշրջանային համագործակցությունը վճռական դերի լինի Հայաստանի անկախության ամրապնդման զարգացման դիահանքների տեսակետից, բարգավաճման, ժողովրդավարության արմատավորման, տեւական խաղաղության հաստատման եւ Արեւմուտքի հետ կապերը խորացնելու տեսակետից:

Ծնողների անվճար այցելություններ իրենց ծառայող որդիներին

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ- ՀՀ պաշտպանության նախարարությունը կազմակերպում է զինվորների ծնողների ամենամսյա անվճար այցելություններ հեռավոր շրջաններում ծառայող իրենց որդիներին, տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը: Այցելությունների կազմակերպման կարգը, սույց օրերը իմանալու եւ ցուցակագրվելու համար, ինչպես նշվում է նախարարության հայտարարության մեջ, անհրաժեշտ է դիմել շրջանային զինկոմիսարիատներ:

Երեւան-Ռիմինի (Իտալիա) առաջին չարտերային ուղերթը փետրվարի 4-ին

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ- Փետրվարի 4-ին կկայանա Երեւան-Ռիմինի (Իտալիա) առաջին չարտերային ուղերթը: ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կոմերցիոն տնօրեն Սիմոն Ավագյանը տեղեկացրեց, որ չվերթի համար տոմսերի փոխարեն նախատեսված ուղեգրերն իրացնելու է «Երազ» գրասենյակային ֆիրման: Վերջինս էլ սահմանելու է ուղեգրերի արժեքը: Ըստ Ս. Ավագյանի, վերոհիշյալ չվերթում քաղաքացիական ավիացիայի դերը սահմանափակվում է ինքնաթիռի հատկացումով:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

«Արմենիա» բանկի ղեկավարները դատապարտվեցին 12 տարվա ազատազրկման՝ ունեցվածքի բռնագրավումով

Երեկ, հունվարի 17-ին ՀՀ Գերագույն դատարանում ամբաստանյալների վերջին խոսքով եւ դատավճռի հրապարակմամբ ավարտվեց շուրջ 3 ամիս ընթացող «Արմենիա» բանկի դատավարությունը, որը կարծես նախատես կոչված էր լուծելու ավելի քան 13000 խաբված ավանդատուների հարցը: Ու թեեւ այսօր դժվար է գուշակել, թե ինչ կնոր դատարանի որոշումը կարող է նպաստել ՀՀ նախագահի հայտնի հրամանագրի (ստորագրված 1994 թ նոյեմբերի 16-ին) գործնականում կայացմանը, այնուամենայնիվ հստակ է հետեւյալը: դատարանին այդպես էլ չհաջողվեց գործը դիտել հատկապես սոցիալական հարթության վրա. հունվարի 17-ի նիստը ասվածի լավագույն առաջացյալն է: Ի դեպ, ոմանց կարծիքով դատավարություն որպես այդպիսին ընդհանրապես չի եղել, այլ փոխարեն ներկայացվել է «վերեւների ձեռքով գրված ագենտաժ»:

Երեկվա դատական նիստը բավականին երկար, նյարդային եւ հակասական ամփոփն էր, որ վերջապես (թեկուզ դժվարությամբ) եզրի հնարավորություն ընձեռվեց բոլոր կողմերին: Կողմերը մի քանիսն էին դատախազը, որը եւ ռեդիկի իրավունքով սկսեց նիստը. Քաջիկ Մկրտչյանի դատապաշտպանը, (բացակա էր ամբաստանյալ Սիմոնյանի դատապաշտպան Պոլինա Շամոնենկովան), իրենք ամբաստանյալները, ավանդատուները ի դեմս Արմենիայի Ղազարյանի, ու վերջապես դատավոր Դավիթ Ավետիսյանը: Դատախազ Ռուդիկ Գրիգորյանը իր ելույթում նշեց, որ ամբաստանյալներին մի հանի անգամ հնարավորություն է տրվել հայտարարելու 300 հազար ԱՄՆ դոլլարի չափով գումար ավանդատուներին վերադարձնելու մասին եւ խոստումը կատարելու դեպքում ազատ արձակվել, սակայն վերջիններս իր խոսքն չեն տվել նման խոստում: Մինչդեռ, ամբաստանյալ Ալբերտ Սիմոնյանն իր վերջին խոսքում կրկին կանգ առավ այդ խնդրի վրա. նշելով, որ թեեւ ինքը երբեք ավանդներ չի ընդունել բնակչությունից, սակայն, հավի առնելով խաբված ավանդատուների վիճակը ու բանկ գնահատելով սեփական կյանքը, դատարանս է կարճ ժամանակահատվածում համադատապարտման մարմիններին հատկացնել հիշյալ գումարը: Արմենիայի Ղազարյանն իր հերթին, դատապարտելով ՀՀ ԿԲ-ի գործունեությունը, ինչպես նաեւ վերջինիս կողմից ստեղծված բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի եւ լուծարային հանձնաժողովի «անօրինականությունները», առաջարկեց մեզ ազատ արձակել ամբաստանյալներին, իհարկե, գումարների վերադարձման դիմումով: Այնուամենայնիվ, դատարանը վճռեց ամբաստանյալներ Ալբերտ Սիմոնյանին, Քաջիկ Մկրտչյանին, Ալբերտ Գրիգորյանին եւ Էդուարդ Հարությունյանին ՀՀ ՔՕ 90 հոդվածի 4-րդ կետով դատապարտել 12 տարվա ազատազրկման, առգրավել նրանց ողջ ունեցվածքը եւ տուժողներ այն «Արմենիա» բանկի լուծարային հանձնաժողովին: Դեռեւս միայն, որ մինչեւ դատավճռի կայացումը վերոհիշյալ ունեցվածքն արդեն իսկ առգրավված էր, իսկ վաճառքից գոյացած գումարների ճիշտ հաշվեն մինչ օրս անհայտ է ավանդատուներին:

Այսօր, ժամը 13:00-ին «արդեն երկրորդ անգամ խաբված» ավանդատուները (իրենց իսկ բնորոշմամբ) նախատեսում են հանդիպել ՀՀ նախագահի նստավայրի առջեւ եւ սկսել բողոքի ցույց:

Ա. Գ.



«ԴՐՈ» ԴԱՏ

«Շիրկիզվող դահարանի փաստաթղթերի մասին հայտնել է Ա. Արծրունին», ասում է ԱԱՆ ֆնիչը

Սկիզբը էջ 1

Փաստաբանի կարծիքով, ցուցադրված տեսաժապավենը ստեղծվել է «խուզարկության կեղծ արձանագրությունը փրկելու համար», եւ դրանք իբրեւ ապացույց չեն կարող օգտագործվել: Պետական մեղադրողը չառարկեց հայտարարությանը՝ «բերությունները բոլորս նկատել ենք, բայց դա բողոքեք կոլեգիայի գնահատմանը»:

Ա. Արծրունու դահանջով երեկ դատարան ներկայացավ նաեւ հիմնական կարգչային մյուս մասնագետը՝ Սոնա Սիմոնյանը: Նրա հայտնած միակ նորությունն այն է, որ ամբաստանյալին ափխաանքային սենյակ բերելուց առաջ իրենց դուրս են հանել: Սենյակում նա եղել է միայն Ռ. Թոքոյանի հետ, երեւի թե նրան օգնելու համար: Ս. Սիմոնյանը հայտնեց նաեւ, որ յուրաքանչյուր ֆայլից մեկից ավելի օրինակ տպել են միայն ինքնական խմբի դահանջով: Ասվածին հետեւեց Վ. Ա վագյանի հայտարարությունը. «Գործի 3 հատորում ամփոփված համակարգչային նյութերի գոյությունը կասկածի տեղիք է տալիս եւ ինքնաստինքյան դժվարացնում դրանց առաջացելիությունը»: Նա կոլեգիային միջնորդեց դահանջել խուզարկությունն տեսագրության բնօրինակը: Իսկ փաստաբան Ժորա Խաչատրյանը միջնորդեց սկզբում լսել խուզարկությունը ղեկավարող դաշտոնատար անձին, դարձել, թե ինչ սկզբունքով է կատարվել տեսագրությունը, որից հետո դահանջել բնօրինակը: Պետական մեղադրողը համաձայն էր Ժ. Խաչատրյանի տեսակետին: Կոլեգիան որոշեց ճշտել ցուցադրված տեսաժապավենի բնօրինակ լինելու հանգամանքը եւ ցուցադրված տեսաժապավենի ու խուզարկության արձանագրության մեջ առկա թերությունները դարձելու նպատակով կանչել եւ հարցաքննել 94 թ. դեկտեմբերի 3-ի խուզարկությունը կատարած քննիչին:

Խուզարկության մասնակիցների հարցաքննությունը (դատախազի դահանջով) սկսեցին ԱԱՆ կարեւորագույն գործով քննիչ Մնացական Սարուխանից, որը «Դրո» գործի քննչական խմբի անդամ է եղել եւ առաջին օրից մասնակցել է խուզարկություններին: ԱԱՆ ղեկավարության դահանջով կատարել է Նար-Դոսի 4/72-ի, ամբաստանյալներ Հ. Սարգսյանի, Հ. Սկրտչյանի եւ Ա. Զաքարյանի բնակարանների խուզարկությունները: Նար-Դոսի 4/72-ում երկրորդ անգամ խուզարկություն կատարելու դատճառը նա բացատրեց օպերատիվ այլ տեղեկություններ ի հայտ գալով: «Տվյալներն, իմ տեղեկությամբ, քննչական խմբի անդամներից մեկին տվել էր Ա. Արծրունին: Նա հայտնել էր, որ անձնական փաստեր ու փաստաթղթեր կան չիրկիզվող դահարանում: Մենք խուզարկության գնալիս որոշակի գիտեինք, թե ինչ ենք խուզարկելու», հայտնեց քննիչը: Նրա տեղեկությամբ գրասենյակի դուռը բացել են բանալիով: Չիրկիզվող դահարանը նույնպես բանալիով են բացել. «Մեզ մոտ կային բանալիների կաղոցներ, որոնց մեջ էր նաեւ այդ դահարանի բանալին: Բացելուց հետո հայտնվեցին փաստաթղթեր, որոնց բովանդակությունը չեմ հիշում, սակայն ամփոփված են արձանագրության մեջ», ավելացրեց նա: Քննիչ Սարուխանի հարցաքննությունը կշարունակվի այսօր:

ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ

Ի վերջո սկսեց ձեւակերպվել երկժամյա հոսանքի նվիրատվությունը

Երեկվանից մայրամուտի խնայողական ռեժիմները էլեկտրաշանթերի աշխատանքային հետ բնակիչների բաժանորդային գրքույկներում վերջապես սկսեցին ձեւակերպել հատկացվող երկժամյա անվճար էլեկտրաէներգիան: Ինչո՞ւ ենք հոգնակի թվով ասում, որովհետեւ բողոքներ մեզ էին ուղղվում Երեւանի տարբեր շրջաններից: Սդաառողները տեղեկացնում էին, որ խնայդրամարկղերի ներկայացուցիչները չձեւակերպելը դատճառաբանում էին նրանով, թե համապատասխան հրահանգ չեն ստացել: Միաժամանակ դժգոհություն էր հայտնվում այն կաղակցությամբ, որ էներգետիկայի նախարարությունը 300 կվտ/ժամ էլեկտրաէներգիան ձեւակերպելու ամսական կարգ է սահմանում: Եթե անվճար հոսանքը երեւանամայնի ճանապարհների լուսավորությունն է, ապա մի՞թե էական է տարբերությունը՝ ամսվա ընթացքում ինչպես բաշխվում է այն ձեւակերպելու: Այս հարցի կապակցությամբ ՀՀ էներգետիկայի նախարարությունում տեղեկացրին, որ հանրապետության խնայդրամարկղերը գտնվում են ՀՀ Ֆինանսների նախարարության ենթակայության տակ, եւ հետեւաբար հրահանգը պետք է ստացվեր այդ նախարարությունից: Բացի այդ, երկժամյա անվճար էլեկտրաէներգիայի վերաբերյալ հանրապետության պաշտոնական լրատվական միջոցներում տեղ գտած հայտարարությունները, որոնք լրացվեցին եւ ներկայացուցիչների հետ համաձայնեցվեցին Ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ համատեղ, պետք է որ որեւէ անմիջական ցուցումն համարժեք համարվեին: Ինչ վերաբերում է երկժամյա հոսանքն ամսեսմիա ձեւակերպելու եւ բնակիչների համար լրացուցիչ չարչարանք ստեղծելու խնդրին, ապա նման հարց չի կարող ծագել, քանի որ սդաառողները պարտավոր են մուծումները ամսեսմիա կատարել խնայդրամարկղերում: Սակայն մեր կարծիքով նախարարությունն այդպիսի կարգ մտցրել է սոսկ այն պատճառով, որպեսզի խրանի բնակիչների մուծումների գործընթացը: Այդ է բնակիչների եւ էներգետիկայի նախարարության վճարունակության հարցը, քանի որ, որքան հայտնի է, նախարարությունը նաեւ իր հերթին ամսեսմիա է վճարում ներմուծվող վառելիքի դիմաց, այդ իսկ պատճառով էլ շահագրգռված է ապահովել մուծումների ամսական պարբերականությունը:

Այնուամենայնիվ, էներգետիկայի նախարարությունը անվճար էլեկտրաէներգիայի ձեւակերպման ժամկետներ սահմանելիս մի խնդիր էլ պետք է հաշվի առներ. ինչպե՞ս պետք է վարվել այն քաղաքացիների հետ, որոնց էլեկտրաէներգիայի ամսական ծախսը չի հասնում 100 կվտ/ժամի: Միգուցե այս կաղակցությամբ նախարարությունը հաս մեկ հայտարարություն հրապարակեր:

Գ. Ս.

«Ազգ» թերթի խմբագրությունը ցավակցում է թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Սամվել Գիլանյանին իր սիրելի մորամոր
Անուշ Գրիգորյանի
մահվան կապակցությամբ:
Հոգեհանգիստը՝ այսօր, ժամը 14:00-ին, Եգնիկ Կողբացի 42, բն. 106 հասցեից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հասցեագրության 9 տող
Գլխավոր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԳԻԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածումը ՊՈՂՈՍ ՊԱՂԱՍԱՐՅԱՆ
Apple Macintosh համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԵՐԲԱՂԱԲԱԿԱՆ

Հրանտ Բագրատյանը հեռանում է, որ վերադառնա՞

Հայաստանում, դժբախտաբար, բարձրաստիճան պետական պաշտոնյաների շուրջը «խորհրդավորության» ու գաղտնիության այնպիսի թանձր մթնոլորտ է ստեղծված, որ ոչ ոք այսօր հավաստի չի կարող ասել, թե ինչո՞ւ է հեռանում Հրանտ Բագրատյանը, կամ արդյո՞ք հեռանում է: Պաշտոնապես նույնիսկ հերքվում է, թե նա հրաժարական է տվել, թեև այդ առթիվ զանազան շուկաները շարունակվում են արդեն տարուց ավելի: Որոշակի շրջանակներում խոսվում է, որ հենց այդ ժամանակներից մրն. Բագրատյանի գրպանում է Համաշխարհային բանկի (թե՞ Միջազգային վալյուտային ֆոնդի) հրավերը՝ բավական պատվավոր մի պաշտոն զբաղեցնելու, ընդսմին, նույնիսկ նշվում է նրա պարավոր աշխատավարձի չափը՝ տարեկան 60 հազար ամերիկյան դոլար: Ո՞վ իմանա, գուցե մեր վարչապետը բավական երկար խորհելուց հետո, վերջապես որոշել է ընդունե՞լ այդ հրավերը: Ինչ կա որ, բացառված չէ: Սակայն մեզանում վարչապետի պաշտոնն այնպիսի խաղաթղթի կշիռ ունի, որ ակամա սկսում ես այլ բացատրություններ էլ որոնել, մասնավորապես՝ խաղաթղթի: Քանի որ, կրկնենք, պաշտոնական մակարդակով այս առթիվ իրազեկման հնարավորություն չկա, ապա մնում է սոսկ ենթադրություններ անել դրանց մասին՝ ենթարկվելով սխալվելու վտանգին: Եվ որովհետև ենթադրություններ անելը ոչ ոքի արգելված չէ, ապա փորձենք կռահել, թե ի՞նչ նկատառումներից ելնելով վարչապետն ինքը կդիմեր հրաժարականի, եթե ենթադրենք նաև, որ նա այդ չի արել հանրապետության նախագահի «խնդրանքով», ինչպես այդ եղավ խոսքով Հարությունյանի պարագայում:

Եվ այսպես, վարչապետը կարող էր հրաժարական տալ նախ եւ առաջ այն դեպքում, եթե գոնե ներքուս ընդուներ, որ իր կառավարության վարած սոցիալ տնտեսական խաղաթղթերը ձախողվել է (բոլորին հայտնի է, որ արտաքին խաղաթղթերը կիրառ ի ռեալացնում է նախագահը, այնպես որ այս բնագավառում որեւէ տարակարծություն չէր կարող վարչապետի հրաժարականի հիմք հանդիսանալ): Բայց պրն Բագրատյանի բոլոր հրապարակային ելույթները սոցիալ տնտեսական խաղաթղթերի սոցիալ տնտեսական խաղաթղթերի ձախողվելու ցավոտությունն են եղել միշտ եւ անվերապահորեն: Գոնե ինքն այս հարցում բողոքել է սեփական իրավացիության մեջ խորապես համոզված մարդու տպավորություն, այնպես որ հրաժարականը հազիվ թե պայմանավորված է հնարավոր «ինքնաքննադատական պայծառակերպությամբ»:

Ավելի հավանական է թվում այլ բան՝ վարչապետի եւ նախագահի միջեւ «սեւ կատու է անցել», եւ վիրավորված Հրանտ Բագրատյանը հեռանում է: Մի՞թե միայն պաշտոններ կարող էին լինել դրա ուսուցիչ: Ոչ սոսկ դրամա գաղտնի չէր վարչապետի եւ ՆԳ նախարարի հակամարտությունը: Գուցե այդպես է, եւ նախագահն ի վերջո «տեր է կանգնել» Վանո Սիրադեղյանին:

Այլ բան էլ կարող է լինել: Անցած տարեվերջին 1996 թվականի սկզբին բյուջեի ենթարկումների ժամանակ Ազգային ժողովում արդյունաբերողներին ներկայացնող պատգամավորները («Բարեփոխումներ» խորհրդարանական խմբակցության անդամները) սկզբնապես դեմ էին քվեարկել նախագծին, եւ վարչապետին հարկ եղավ դիմել ուղղակի շանտաժի (նա պահանջեց դնել կառավարությանը վստահության քվե տալու հարցը), որից հետո միայն պատված արդյունաբերողների խմբակցությունը կողմ քվեարկեց պետբյուջեն հաստատելու որոշմանը: Իսկ ո՞վ չգիտի, որ հիշյալ խմբակցությունը ղեկավարում է նախագահի եղբայր Թելման Տեր Պետրոսյանը: Մի՞թե այս «միջադեպը» առիթ չէր կարող ծառայել վարչապետ նախագահ հարաբերությունների վատացման համար:

Արտաքուստ անտեսանելի այլ պատճառներ էլ կարող էին լինել, բարբասանքներին տուրք չտանք եւ կենցաղային «մանրուքների» մակարդակին չիջնենք, այդպիսիք առանց այն էլ բավական շատ են պտտվում վարչապետի հրաժարականի հարցի շուրջ: Մնանք այն ենթադրության շրջանակներում, որ ինչ ինչ պատճառներով երկրի ամենաբարձրաստիճան պաշտոնյաների հարաբերություններում ճեղքվածք է առաջացել: Այդ դեպքում կարելի՞ է ակնկալել, որ պրն Բագրատյանը այսօր հեռանում է, որպեսզի հետո վերադառնա: Նկատի ունեմ... նախագահական ընտրությունները: Մնալով վարչապետ՝ նա, ինչ խոսք, բարոյական առումով շատ ավելի փիլ իրավունք կունենար մասնակցել նախագահական ընտրություններին որպես հավանական թեկնածու, քան եթե այդ անի՝ վիրավորվածի կեցվածք ընդունելով:

Ընդսմին, ես զանց եմ առնում այն հնարավորությունը, որ վարչապետն ու նախագահը գաղտնի համաձայնության են եկել, որ հետագայում, ամենավերջին պահին, պրն Բագրատյանը հանի իր թեկնածությունը Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին: Այդպիսի քայլն իմաստ կունենար, եթե նախագահական ընտրարշավին մասնակցողների թվականակը խիստ փիլ լիներ: Բայց մեզանում ո՞վ է կասկածում, որ մենք կունենանք նվազագույնը 5-6 թեկնածու: Հետեւաբար, ժողովրդավարության պատրանք ստեղծելու համար նախագահն ու վարչապետը նման «թատրոնի» կարիք չունեն: Թեկնածուների թիվն առանց այն էլ շատ կլինի, իսկ որքան շատ լինի, այնքան ավելի՝ կմեծանա հաղթանակ տանելու շանսը ներկա նախագահի համար: Բայց դա կարող է ծեռնտու լինել նաեւ ներկա նախագահին գոնե ինչ որ չափով հաստատել այն էլ շատ կանի դեմքի: Մինչեւ նախագահական ընտրությունները դեռ բավական ժամանակ կա, եւ ո՞վ կարող է երաշխավորել, որ պրն Բագրատյանը վաղն ինքն իրեն չի համարի այդպիսին, եթե այսօր դեռ այդպես չի մտածում եւ եթե նույնիսկ հրաժարական հերքի այս ենթադրությունը:

Վերջապես, եթե այս բոլորը վաղը մեր պաշտոնական այրերը հայտարարեն «անհիմն», ապա թող բարի լինեն առաջին հերթին իրենք իրենց մեղադրել գաղտնիության ու խորհրդավորության մթնոլորտի համար, որ իրենք են ստեղծել իրենց շուրջը՝ խորթանալով ու անջրպետվելով «սիրելի հայրենակիցներից», որոնց այդպես էին դիմում ոչ այնքան վաղուց: Հայաստանը ցնցող համազգային հարհմվանքներում: Այն երանելի օրերին նրանք բոլորիս «զավակներն էին», այժմ, ավա՜ղ, դարձել են բոլորիս... ղեկավա՜ր: Մի՞միայն: Իմ պատկերացմամբ՝ նրանք դրանով շա՜տ ավելին են կորցրել, քան ծեռք բերին: Հի՞ շտ եք «Լինել եաթոլեռն եւ դառնալ կա՜սր, ինչպիսի՞ անկում...»:

ՌՈՒԲԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մի լրագրի պատմություն կամ «Լրագիր օր»ի խմբագիրը չի հասկանում «Լրագրի» խաղերը

***Անցած հինգ տարիների ընթացքում հայ մամուլը այնպիսի վայրիվերումների է ականատես եղել, որ թվում էր, թե «Լրագիր» եւ «Լրագիր օր» գրեթե միանման թերթերի հայտնությունը զարմանալու առիթ չպետք է տար: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ իշխանությունները, իսկ ավելի ճիշտ, տարբեր իշխանամետ ուժեր, անցած մի քանի տարվա ընթացքում մեծ փորձ են կուտակել միանման անվանումներով արհեստական կուսակցություններ, կազմակերպություններ ու տպագիր օրգաններ ստեղծելու կամ ջլատելու բնագավառում: Բնականաբար, այս ամենը, որքան էլ դա հերքեն «լրագիրների» խմբագիրները, սերտորեն առնչվում է քաղաքականության հետ, կամ, ինչպես բնորոշում են հենց իրենք, «քաղաքական խաղերի հետ»: Թե ովքեր են կանգնած դրանց հետեւում, իշխող կուսակցության ո՞ր թեւը, կարելի է միայն ենթադրություններ անել: Ու թեեւ հայտնի են նաեւ կոնկրետ քաղաքական գործիչների անունները, որոնց մասին առայժմ լռում ենք, «լրագիրների» զարգացման ընթացքը կկողմնորոշի, թե ինչպես է ամենաբարձրաստիճան պաշտոնյաներ ներգրավվում այդ գործընթացում: Մենք այդ հարցերին պատասխան կտանք, երբ ինքներս գտնենք դրանց հիմքերը: Ինչպես ասում է ժողովուրդը, ինչ-որ բան ինչ-որ տեղ ինչ-որ ինչ-որ ինչ-որ

ԱԶԳ

ԻՍԱՏԻՍՈՒՄ

Երկու հայ օրենքի հակառակ կողմերում

«Օրենքի առաջ բոլորը հավասար են»

Մենք իրավունք չունենք սահմանելու ուրիշին կյանք պարգևելու կամ այդ կյանքը նրանից խլելու, պարտականությունը, ասում է դատախազ Ռիչարդ Թոմպսոնը

Շարունակում ենք ներկայացնել Երևանը Ազատյանի զույգ հարցազրույցները: Երեկվա համարում հայտնի հրադարակախոսը զրուցում էր բժիշկ Գեորգյանի հետ: Այսօր նրա զրուցակիցն է Օուիլենդի (Միչիգան) շրջանային մեղադրող դատախազ Ռիչարդ Թոմպսոնը, որը նույնպես ծագումով հայ է Թոմասյան: Չնայած զրույցի մասնակիցների ազգությունն այնքան էլ առնչություն չունի արծարծվող հարցի հետ, այնուամենայնիվ այդ հանգամանքն առավել հետաքրքրական է դարձնում այդ զրույցը. մանավանդ եթե հաշվի առնենք, թե զրուցակիցները օրենքի երկու հակադիր կողմերում են կանգնած:

դատաստան, նվիրատվություններ է արել և նույնիսկ նկեղեցի կառուցել իր միջոցներով Բեյրութում: Ես հաճախել եմ նախ Վիրջինիայի ռազմական դպրոց, ապա Միչիգանի համալսարան, որտեղից զորակոչվել եմ բանակ և հետախուզության ասպարեզում՝ հասել կապիտանի աստիճանի: Զորացրվելուց հետո ուսումս շարունակել եմ Ուեյն համալսարանում և ստացել իրավաբանի մասնագիտություն: Գեորգյանի մի իրավաբանական բնկերությունում և իմ անձնական գրասենյակում յոթ տարի աշխատելուց հետո, 1973-ին աշխատանքի եմ անցել դատախազությունում որպես դատախազի գլխավոր օգնական: 1988-ի վերջերին լուծվել եմ դատախազ, իսկ 1992-ին վերընտրվել նույն դիրքում: Ամուսնացած եմ, ունեմ երեք որդի՝ Ռիչարդը 4 տարեկան, Մարյուն 3 և Անդրյուն մեկ տարեկան:

– Ձեր և Ջեկ Գեորգյանի սանները շատ հաճախ են շոշափվում մամուլի էջերում: Ասացեք խնդրեմ, ձեզանից ո՞ր մեկն է մյուսին դարձրել ավելի համբավավոր, դուք նրան, որ համառորեն շարունակում է իր գործունեությունը Ձեր իրավասության տակ գտնվող Օուիլենդ քաղաքում, թե՞ նա Ձեզ, որ սմին անգամ ստիպված եք լինում նրան դատի տալ որպես «անհնազանդ» բժշկի:

– Ես համբավ ձեռք չեմ բերել, բայց կարծում եմ Գեորգյանի համբավը տարածվել է նաև Միացյալ Նահանգների սահմաններից դուրս: Բոլորը գիտեն նրան որպես այսպես կոչված «ինքնասպանության սարքի կամ մեխանիզմի» հնարող:

– Դուք անձնապես հավատո՞ւմ եք, որ Գեորգյանի կատարածը սխալ է, թե դարձյալ օրենքի դատաստանության դիրքերից եք նրան հետապնդում:

– Որպես մեղադրող փաստաբան իմ դերն է կիրառել օրենքը, և մեր երկրում մենք հարգանքով ենք, որ օրենքի ազգ ենք: Ես երդվել եմ դատապանել օրենքը և դարձյալ եմ կատարել այն, անկախ այն հանգամանքից՝ օրենքները արդարացի են, թե ոչ: Եթե վերանայեմ օրենքը, չեմ հետաքրքրվի այն խախտողներով: Օրինակ, մինչև 1970-ական թվականները բժիշկներին չէր թույլատրվում արհեստական վիժեցում կատարել և մենք դատաստանի իրավասություն ունեինք դրանով զբաղվողներին, բայց հենց վերացավ այդ օրենքը, վերացան նաև այդ բնույթի դատավարությունները: Այդ գործում անձնական նախապատմության հարց չի կարող լինել: Բոլոր օրենքները էլ մենք դարձյալ ենք դատապարտել, անկախ դրանց ճիշտ կամ սխալ, արդարացի կամ անարդար լինելուց: Ինչ վերաբերում է բժիշկ Գեորգյանին, ինչքան շատ եմ խորանում հարցի էության մեջ, այնքան ավելի եմ համոզվում, որ նրա կատարածը ոչ միայն անօրինական է, այլ նաև անբարոյական:

– Ըստ նրա, ինքնասպանությանն աջակցելն անօրինական արարք չէ՝ ճի՞շտ է նա, թե դարձյալես օգտվում է օրենքների ոչ հստակ ձևակերպումներից:

– Բացարձակապես սխալվում է: Այդպես մենք նրան չէինք մեղադրի: Երբ առաջին անգամ, Այգհայմերի հիվանդությամբ տառապող կնոջ հարցում: Նրան չտրս գործի առնչությամբ մեղադրանք է ներկայացված եւ առաջիկա փետրվարին ոչ դրիլին նա դեմ է դարձյալ դատարան կանչվի:

– Դուք Գեորգյանին անձամբ ճանաչո՞ւմ եք, թե դատարանի դահլիճում եք միայն հանդիպում:

– Անձամբ չեմ ճանաչում նրան: Մեր աշխատանքում 102 դատախազի օգնականներ են ներգրավված և հիմնականում նրանք են գործերը վարում: Ես հազվադեպ եմ դատարանում լինում:

– Դեմ առ դեմ իրար չե՞ք հանդիպել երբեք:

– Ոչ: Իրար հետ երբեմ չենք խոսել: Կարծում եմ նա իմ մասին մեծ կարծիքի չէ:

– Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Գեորգյանը այդքան համառորեն դեմ դուրս գալիս օրենքներին, դատարանին: Հիմա՞ր է, մոլեռա՞նդ, թե՞ օրենքի բարդ համակարգի թերություններին լավ գիտակ:

– Չգիտեմ նրա դրդապատճառները, բայց որոշ է մի բան, որ գնալով նա հմտանում է իր գործում: Սկզբնական շրջանում նա դեղորի վայրում թողնում էր ինքնասպանությանն օժանդակող իր սարքը և հանրությանը դատում էր իր կատարածի մասին, մինչդեռ վերջին դեպքերի ժամանակ ոչ ինքն է ներկա լինում, ոչ սարքավորումը կարելի է գտնել, ոչ էլ բարեհաճում է կատարվածի մասին խոսել: Իր փոխարեն հանդես է գալիս փաստաբանը, իսկ վերջինիս ասածներ չեն կարող օգտագործվել Գեորգյանի դեմ: Մեր շարքը հյուսվում է լուրջ մի դատավարություն: Նույնիսկ ինքնասպան եղողի հարազատներ չեն ցանկանում մանրամասներ դատել: Գործը առաջ չի գնում:

– Նույն ազգի զավակները լինելու հանգամանքը որևէ դեր չի՞ խաղում Ձեր հարաբերություններում:

– Ոչ մի: Որպես օրինապահ մարմինների ներկայացուցիչ եւ բոլոր օրենախախտների դեմ եմ դատարանում, լինեն նրանք հայ [illegible] թե ամերիկացի: Օրենքի առաջ բոլորը հավասար են: Բայց ես անձնապես զարմանում եմ, որ հայերը դատապարտում են նրան: Լինելով սատանայական (չէ՞ որ մենք առաջինն ենք ընդունել հրեաներին որպես դեմոնական կրոն), զարմանալի է, որ նրանք դատապարտում են

Ջեյնեթ Արկինսի ինքնասպանության հարցը երեսուն նկատ, 1990 թվին, մենք նշեցինք, որ ինքնասպանության աջակցելն ընդունելի չէր հասարակության կողմից և մեղադրական գործ հարուցեցինք Գեորգյանի դեմ: Երբ մեր ներկայացրած հայցը մերժվեց, օրենսդիր մարմիններին առաջարկեցինք մշակել համապատասխան օրենսդրություն հնազայում դրանով առաջնորդվելու համար, բայց նրանք չցանկացան նման խնդրված հարցը քննարկել: Մի քանի ամիս հետո, 1991-ի հոկտեմբերին Գեորգյանն աջակցեց Շերի Միլլերի եւ Մարջորի Ռոնբցի ինքնասպանություններին: Այս անգամ մենք գործը ներկայացրինք ժողովրդական դատարանի քննարկմանը, եւ այն ամբաստանեց Գեորգյանին: Այնուհետև Միչիգանի Գերագույն դատարանն էլ քննարկեց երկու գործերը եւ այդ որոշումը ճիշտ համարեց: Չնայած առայժմ համապատասխան օրենսդրական ակտ չկա, բայց այն դիտվում է ընդհանուրի կողմից ընդունված չգրված օրենքների կոնտեքստում եւ համաձայն դրան նա մեղավոր է սպանության մեջ. քանի որ իր կատարած քայլով առաջ է բերում սպանություն: Երբ նույնիսկ նա պատասխան է կամ մասակարարում ինքնասպանության միջոցը կամ սարքը, առա դարձյալ մեղավոր կճանաչվի այսպես կոչված «օժանդակություն ինքնասպանությանը» հոդվածով, որը 5 տարվա բանտարկություն եւ 10 հազար դոլարի տուգանք է նախատեսում: Այնպես որ իր մասնակցության չափից է կախված կատարած [illegible] ծանրությունը: Այն հասարակության կողմից ընդունված (բայց չգրված) օրենքների խախտման տեսակետից կամ մաքուր սպանություն է, կամ էլ աջակցություն ինքնասպանությանը: Գեորգյանն այս գործը նույնիսկ ներկայացրեց հանձնաժողովի Գերագույն դատարանին [illegible] ունենալով պատասխանություն գտնել Ֆեդերալ օրենքների միջոցով, բայց Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը մերժեց լսել գործը: Առայժմ Միչիգանի դատարանի որոշումը հաստատվում է վերջին խոսքն այդ հարցում: Նրան չտրս գործի առնչությամբ մեղադրանք է ներկայացված եւ առաջիկա փետրվարին ոչ դրիլին նա դեմ է դարձյալ դատարան կանչվի:

– Դուք Գեորգյանին անձամբ ճանաչո՞ւմ եք, թե դատարանի դահլիճում եք միայն հանդիպում:

– Անձամբ չեմ ճանաչում նրան: Մեր աշխատանքում 102 դատախազի օգնականներ են ներգրավված եւ հիմնականում նրանք են գործերը վարում: Ես հազվադեպ եմ դատարանում լինում:

– Դեմ առ դեմ իրար չե՞ք հանդիպել երբեք:

– Ոչ: Իրար հետ երբեմ չենք խոսել: Կարծում եմ նա իմ մասին մեծ կարծիքի չէ:

– Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Գեորգյանը այդքան համառորեն դեմ դուրս գալիս օրենքներին, դատարանին: Հիմա՞ր է, մոլեռա՞նդ, թե՞ օրենքի բարդ համակարգի թերություններին լավ գիտակ:

– Կուզենայի՞ք որ կառավարության կողմից այդ արարքը դատապարտող կամ դատապանող հստակ օրենք լիներ:

– Այդպիսի օրենք կա արդեն: 1963-ին Միչիգանի բնակիչները ընդունեցին նահանգային Սահմանադրության նոր տարբերակը, որտեղ հստակ նշված է, որ այն բոլոր դեպքերում, երբ որոշակի գրված օրենք չկա հասարակության կողմից ընդունված (բայց չգրված) օրենքների խախտման դատաստանության վերաբերյալ, կիրառվելու են հենց այդ չգրված օրենքները: Դրանք մեր արդարադատության եւ իրավական համակարգի անբաժանելի մասն են կազմում: Գլխավոր օրենսդրական ակտը անհրաժեշտ է միայն տարբերակելու համար դիտավորյալ սպանությունը (որը դատապարտելի է), բժշկական օգնության չցուցաբերելուց կամ զանալուց կամ ցավազրկող դեղեր չհայթայթելուց, երբ այդ բոլորը առաջնորդվում են կամ արագացնելու հիվանդի մահը (որը դատապարտելի չէ: Իհարկե մարդը, որպես անհատ, իրավունք ունի հրաժարվելու բժշկական ծառայությունից եւ դեղերից, որ իմը ցանկանում է մահանալ, բայց շատ դեպքերում այդ որոշումն էլ դյուրանավորված է լինում շրջապատի վերաբերմունքով: Երբ, օրինակ, 85 տարեկան տատիկին հասկացնել են տալիս, որ իր դեղերի վրա ծախսված հարյուրավոր դոլարներ կարող են ծախսվել իր բոլորների ուտման համար, որ մի անհետաքրքիր տրկումով նա կարող է վերջ տալ իր կյանքին եւ տատապանքներին, ինչպե՞ս կարող է տատիկը հրաժարվել դրանից: Կան նաև կառավարության կողմից առաջադրական, տարատեսակ միջոցներ, ստանձնավորելու ձևեր, որոնք նույնպես կարող են նպաստել նման որոշումների ընդունմանը: Այնպես որ մարդկանց վրա անուղղակիորեն ազդելու զանազան միջոցներ կան: Մարդ անհատը, փաստորեն անկախ, ինքնուրույն կերպով չի ընդունում կյանքին վերջ տալու որոշումը: Կա նաև այն հանգամանքը, որ մենք լուռ հավանություն ենք տալիս, ասենք, բերեից ու ոտներից զարկ մի մարդու մահանալու ցանկությանը, ասելով «այդպես սով նա կիրկվի», մինչդեռ ողբերգություն ենք սարքում այն դեպքում, երբ առողջ մարդն է այդ ցանկությունն արտահայտում, սովորական անհաջող սիրո դատապարտության հետևանքով: Մի՞թե սա խտրականության վառ դրսևորում չէ:

– Հարցն, ըստ երևույթին, նույնքան փիլիսոփայական, հոգեբանական եւ էթիկական ու բարոյական բնույթ ունի, որքան բժշկական եւ իրավական:

– Ճիշտ այդպես: Այդ բոլորը ոչեմ է հաշվի առնել: Հարցը բազմակողմանիորեն քննարկելու կարիք ունի: Առայժմ մարդիկ միակողմանի մոտեցում են ցուցաբերում [illegible] համարում ինչ, եթե երկարաձգում ես գավերի մեջ տառապող հիվանդի կյանքը: Չեն մտածում այն հետևանքների մասին, որ կարող են առաջանալ ինքնասպանության օժանդակությունը օրինականացնելուց: Եթե այն դառնա հասարակության կարգավորող օրենքներից մեկը, մենք գործ ենք ունենալու միայն Միչիգանում 20-30 հազար բժիշկների հետ, որոնք բոլորն էլ օգտվելու են այդ օրենքից: Պատկերացնո՞ւմ եք այն հազարավոր անմեղների վիճակը, որոնք գոն են դատապարտ ապա կամ այն անհատի ընտանիքում: Դոկտ. Էնդ Ալենսանդրը, որը մասնակցել է Նյուրնբերգյան դատավարությանը, տարիներ առաջ գրել է մի գիրք, որտեղ ասվում է, որ ֆաշիստների վայրագությունները հիմնվում էին հասարակության եւ հատկապես բժիշկների կողմից ընդունված այն համոզման վրա, որ իրենք կյանք կա, որ չարժի առրեկ: Հենց այդպիսի համոզումը դարձնում օրենք, նախ հաշմանդամներին կոչեցա այդ կարգի մեջ, հետո բերի զարգացածներին, չքերներին, եւ ի վերջո նաև բոլոր տեսակի անցանկալիներին: Տեսնո՞ւմ եք, օրինակը նացնելու դեպքում ինչ ծանրություններ կարող է ընդունել հարցը:

– Ինչպիսի՞ն է հարցի դրվածքը Ձեր հայրենիքում:

– Մենք դեռ ենք ունենալու միայն Միչիգանում 20-30 հազար բժիշկների հետ, որոնք բոլորն էլ օգտվելու են այդ օրենքից: Պատկերացնո՞ւմ եք այն հազարավոր անմեղների վիճակը, որոնք գոն են դատապարտ ապա կամ այն անհատի ընտանիքում: Դոկտ. Էնդ Ալենսանդրը, որը մասնակցել է Նյուրնբերգյան դատավարությանը, տարիներ առաջ գրել է մի գիրք, որտեղ ասվում է, որ ֆաշիստների վայրագությունները հիմնվում էին հասարակության եւ հատկապես բժիշկների կողմից ընդունված այն համոզման վրա, որ իրենք կյանք կա, որ չարժի առրեկ: Հենց այդպիսի համոզումը դարձնում օրենք, նախ հաշմանդամներին կոչեցա այդ կարգի մեջ, հետո բերի զարգացածներին, չքերներին, եւ ի վերջո նաև բոլոր տեսակի անցանկալիներին: Տեսնո՞ւմ եք, օրինակը նացնելու դեպքում ինչ ծանրություններ կարող է ընդունել հարցը:

– Ինչպիսի՞ն է հարցի դրվածքը Ձեր հայրենիքում:

– Երբ դիմենք այդ երկրների փորձին, ոչեմ է հաստատ եզրակացնենք, որ երբեմ չի կարելի օրինականացնել միջոցագրված ինքնասպանությունը: Անգլիայի լորդերի դատարանը տարիներ առաջ քննարկեց այդ հարցը եւ չնայած նախնական ընթերցումների ժամանակ շատերը հակված էին ընդունելու օրենքը վերանայելու նախաձայնանով, վերջում սակայն դեմ քվեարկեցին դրան, համոզվելով, որ վերանայությունն անհնարին է լինելու: Կանադայի Գերագույն խորհուրդը նույնպես մերժեց օրինականացնել այն, համարելով, որ դրանով «կսի վականաբերելի սպանությունը» Հոլանդիայում 1970 թվականներից սկսած երկակի մի դրություն է ստեղծված: Չնայած հանրաքվեներ կան է միջոցագրված ինքնասպանությունը, դատարանը որոշ բացառություններ է անում եւ որոշ հանցանքներում այն դատապարտելի չի համարում: Բայց 1992-ին կառավարության կողմից կատարված ուսումնասիրությունը ցուցադրեց, թե նման գործելակերպը անընդունելի է եւ հղի անկանխատեսելի հետևանքներով: Այնպես որ հարցը դեռ երկար ժամանակ վիճելի կմնա: Իմ կարծիքով, մենք իրավունք չունենք սահմանելու Աստծո կամքը եւ դարձրել այս կամ այն անհատին շարունակելու իր կյանքը կամ վերջ տալու դրան: Չենք կարող մենքին ասել. «Դու կարող ես ապրել», իսկ մեկ ուրիշին «Դու չես կարող ապրել»: Տարբեր տեսակի տառապանքներ կան, եւ հնարավոր չի ասել, որ տանելի է, որը ոչ: Շատ անհայտ հիվանդներ գիտի ոգեին շարունակել իրենց կյանքը, բայց առանց ցավերի, հանգիստ դայմաններում: Բժիշկների առաջնահերթ մտահոգությունը ոչեմ է լինի դադարեցնել ցավը, կամ նույնիսկ դադարեցնել բուժումը, եթե այն բացարձակապես ավելորդ է եւ բողոքել, որ հիվանդը [illegible] բացառում առանց հրաժարվելու այս կյանքին եւ ոչ թե, հանում վողի, արհեստականորեն երկարաձգել նրա կյանքը: Բժշկական տեղեկագիրը, դիրքորոշումը, հազվադեպ անգամներ առաջ է անում բժշկական [illegible]: Դա է, որ պետք է հանդիսանան բժիշկները, եւ ոչ միայն նրանք:

digitised by A.R.A.R.@

ԱՀԳ

Միջազգային

ԻՐԱՆԻ ՈԱԴԻՈ

Իրանը շրջանի անվտանգության նախանձախնդիր

Հունվարի 16-ին Թեհրանում մի հոյակագրի հրաղարակումով եռօրյա աշխատանքներն ավարտեց Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի անվտանգության ու արտաքին քաղաքականության նվիրված գիտաժողովը: Իրանի ռադիոյի համաձայն, հրաղարակված հոյակագրում, վկայակոչելով երկրների քաղաքական ու տնտեսական հարաբերությունները, ուշադրության է արժանացել Իրանի դերը Սիբիրն Ասիայի եւ կովկասյան երկրների տնտեսական վերակառուցման գործում: Գիտաժողովին մասնակցում էին Գերմանիայի, Սաուդիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Շվեդիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Հնդկաստանի, Թուրքիայի, Ուզբեկստանի, Դաղստանի, Ղրղզստանի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի եւ Իրանի փորձագետներ:

Իրանի ռադիոն հայտնում է նաեւ, որ հունվարի 16-ին արտգործնախարար Վելայաթին այցելեց Քուվեյթ, որտեղ հանդիպեց իշխան Սհմադ Սաբահի, ժառանգորդի եւ վարչապետի հետ: Հանդիպումների ընթացքում կողմերը շոշափեցին տարածաշրջանում խաղաղության ապահովման եւ երկրների համագործակցության զարգացման հետ առնչվող հարցեր:

Սհմադ Սաբահը հույս հայտնեց, որ այդ կապերն ավելի կընդլայնվեն ու կխորանան: Իրանի արտգործնախարարը Պարսից ծոցում կայուն անվտանգության հաստատման ու ոպի ոպանման, ինչպես նաեւ երկու երկրների համար շահավետ համարեց երկկողմ հարաբերությունների ընդլայնումն ու տարածաշրջանի երկրների համագործակցության զարգացումը:

Ա. Գ.

ՓԱՍՏԵՐ

ԳԴՀ-ում խորհրդային զինվորներից շատերը ստրկության էին վաճառվում

Բեռլինի մարդու իրավունքների պաշտպանության «Հելսի» ընկերությունը Ռոստոկ քաղաքից ոչ հեռու հայտնաբերել է բանտարկյալների բարբարոսական խոշտանգումների մի կնճռանավայր: Բայց այս անգամ խոսքը երկրորդ աշխարհամարտի ֆաշիստական բանտագնդանների մասին չէ: Ռոստոքի մերձակա բանտախցերը նախատեսված էին նախկին ԳԴՀ-ում խորհրդային Ա-րեմտյան զորախմբի զինվորների դատաքննության համար:

Ինչպես տեղում է «Հելսի» ընկերությունը, Գերմանիայի տարածքում խորհրդային զորքերի գտնվելու ժամանակաշրջանում, 70-80 տարի առաջ, բանտարկյալներ չկատարող գերմանական ձեռնարկություններ: Այդ կերդ ասած, խորհրդային հրամանատարները իրենց ենթականերին տրամադրում էին տեղական գործարաններին ու ֆաբրիկաներին, իսկ նրանց աշխատավարձը գրպանում էին:

Որքան էլ տխուր լինի, «Հելսի» ղեկավարներն անհիմն չեն: Օրերս Գերմանիայի հեռուստատեսությունը հրապարակեց խորհրդա-գերմանական բարեկամության ընկերության նախկին խորհրդական Դիտմար Եսկեի վկայությունները, որը միաժամանակ գերմանական նավաշինարաններից մեկի ղեկավարն է եղել: Նա խոստովանում է, որ ժամանակին ինքը էժան աշխատուժ է փնտրել խորհրդային կայազորներում: Իսախելով գերմանական օրենքները, նա խորհրդային զինվորներին ստրկության է վաճառվում:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

ՀԱՄԱՌՈՏ

Ելցինը ընտրություններին չդեմ է մասնակցի, հայտարարեց Զյուգանովը

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ-ՌԼ: ՌԴ Պետդումայի հունվարի 16-ին մեկնարկած առաջին նիստի ընդմիջմանը Ռուսաստանի Կոմկուսի առաջնորդ Գենադի Զյուգանովը հայտարարեց, որ Բորիս Ելցինը չդեմ է մասնակցի հունիսին կայանալիք նախագահական ընտրություններին: Նրա խոսքերով, դատանդների վերջին ճգնաժամը ցույց է տալիս, որ Ելցինի հաղթականությունը տարակուսելի է: Ըստ Զյուգանովի, Ելցինն այլեւս չի կարող երաշխավորել իր ժողովրդի անվտանգությունը: «Յաբլոկո»-ի հրաղարակած հայտարարության մեջ ասվում է, որ Ռուսաստանի իշխանություններն ակնհայտորեն ցույց են տվել, որ հեռու են երկիրը ղեկավարելու դիրքերից:

Չուբայսի հրաժարականը ընդունվեց, նա հեռացավ անձնական պատճառներով

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ-ՌԼ: Հունվարի 16-ին վարչապետ Չերնոմիրդինին իր հրաժարականն է ներկայացրել երկրի առաջին փոխվարչապետ Ա. Չուբայսը: Հրաժարականի մասին մանրամասներ չեն նշվում: Արձանագրվել է միայն, որ Չուբայսը հեռանում է անձնական պատճառներով: Հայտնի է, սակայն, որ նա երկար ժամանակ դահիճանողական ուժերի հարձակման թիրախ-էր, հատկապես սեփականաշնորհման իրականացման եղանակների համար: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Բորիս Ելցինն ընդունել է Անատոլի Չուբայսի հրաժարականը:

Մոսկվայում կստորագրվի ռուս-ադրբեջանական համաձայնագիր

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊՆԼ: Հունվարի 18-ին Մոսկվայում Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ կստորագրվի միջկառավարական համաձայնագիր ադրբեջանական նավթը Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ ուղեգծով տեղափոխելու մասին: Բաքվի ռադիոյի հաղորդման համաձայն, համաձայնագիրը կստորագրեն Հ. Ալիեւը եւ Վ. Չերնոմիրդինը:

Իսրայելը խոստացել է դադարեցնել Թուրքիայի դահանջը Սիրիայի դեմ

ԱՆԿԱՐԱ 16 ՀՈՒՆՎԱՐ, ՆՏ AFP: Ինչպես հաղորդել են Թուրքիայի դաշտոնատարները, Իսրայելը դարտավորվել է խաղաղության դայմանագիր չկնքել Սիրիայի հետ, որին Անկարան մեղադրում է Ֆուրդ անջատողականներին աջակցելու մեջ, քանի դեռ Դամասկոսը դաշտպանում է ահաբեկչական գործողությունները: Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչն ասել է, որ Թուրքիան լիարժեք երաշխիքներ է ստացել, որ հրեական դետությունը Սիրիայի հետ խաղաղության դայմանագիր կկնքի, եթե վերջինս փոխի իր հաղթականությունը ահաբեկչական խմբերի նկատմամբ:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԱՐԴԻԿ

«Ներդրումներ կարելի է անել նույնիսկ Ռուսաստանում»

Ասում է Ֆրանսիացի հաջողակ գործարարը

Հինգ տարի առաջ Ֆրանսիացի գործարար Ժան-Ժակ Վոլան Մոսկվայում գրասենյակ բացեց: Նա այն ժամանակ Ֆրանսիայում ուներ սահմանափակ դատասխանատվությամբ երկու ընկերություն եւ ամեն ամիս Ռուսաստան էր բերում ադրանքներով լի մեկ բեռնատար: Ներկայումս Ֆրանսիացի ձեռնարկատերը Մոսկվայում ամսական ընդունում է 20-25 բեռնատար եւ արդեն 5 մլն դոլար է ներդրել Ռուսաստանի ադրանքաշրջանառության մեջ: Այս մասին տեղեկացնող ֆրանսիական «Ֆիգարո» թերթը նշում է, որ 49 ամյա Ժան-Ժակ Վոլան չի զղջում իր ձեռնարկման համար: Ավելին, նա ձգտում է տեղ գրավել նաեւ Արեւելքի, մասնավորապես Բաքվի, Տաշքենդի, Բլագովեշչենսկի շուկաներում:

Ժան-Ժակ Վոլան կարողացել է հարմարվել Ռուսաստանի դայմաններին, նա շատ լսում է, բայց երբեք չի խոստանում այն, ինչ չի կարող կատարել: Երբ որեւէ նոր օրենք է ընդունվում, նա այն կատարում է բառացիորեն, իսկ եթե օրենսդրությունը բերի է, ձեռնդան է մնում: «Ռուսաստանում մինչեւ օրս սեփականությանը վերաբերող օրենք չկա, ասում է նա: Դուք կարող եք դառնալ ընկերության տնօրեն, բայց երբեք չեք լինի դատարի եւ հողատարածքի սեփականատեր: Եթե համենայնդեպս փորձեք որեւէ խանութ գնել, ճակատագրական կերդով կկորցնեք ձեր դրամը»: Ֆրանսիացի արդյունաբերողը օտարերկրացի ձեռնարկատերերին խորհուրդ է տալիս Ռուսաստանում որեւէ գործարանի ձեռքբերման դեպքում արտադրել միայն այն, ինչ նշված է, այլապես կարող են լուրջ բարդություններ ծագել: Բացի դրանից, չդեմ է որեւէ բան գնել դրա իրական արժեքից ցածր գնով:

Ռուսաստանում դատվերով սպառնությունների թիվը 1995 թ. աճել է 26 տոկոսով: Ժան-Ժակ Վոլայի կարծիքով, դրանք սովորական հավելեմատներ են, որոնք կաղ չունեն օտարերկրացի ներդրողների հետ: «Խոսքը մի խումբ ֆինանսիստների, գործարարների եւ դատաքննիչների մասին է, որոնք մասնակցում են Ռուսաստանի այսպես կոչված մեծ բաժանմանը», ասում է նա:

Ֆրանսիացի ձեռնարկատերը խոստովանում է, որ Մոսկվան հիշեցնում է 20 տարի առաջ Հնդկաստանը: Դրանք երկուսն էլ զարգացող դաշնային հանրապետություններ են: Ժան-Ժակ Վոլան կարողացել է հարմարվել Ռուսաստանի դայմաններին, նա շատ լսում է, բայց երբեք չի խոստանում այն, ինչ չի կարող կատարել: Երբ որեւէ նոր օրենք է ընդունվում, նա այն կատարում է բառացիորեն, իսկ եթե օրենսդրությունը բերի է, ձեռնդան է մնում: «Ռուսաստանում մինչեւ օրս սեփականությանը վերաբերող օրենք չկա, ասում է նա: Դուք կարող եք դառնալ ընկերության տնօրեն, բայց երբեք չեք լինի դատարի եւ հողատարածքի սեփականատեր: Եթե համենայնդեպս փորձեք որեւէ խանութ գնել, ճակատագրական կերդով կկորցնեք ձեր դրամը»: Ֆրանսիացի արդյունաբերողը օտարերկրացի ձեռնարկատերերին խորհուրդ է տալիս Ռուսաստանում որեւէ գործարանի ձեռքբերման դեպքում արտադրել միայն այն, ինչ նշված է, այլապես կարող են լուրջ բարդություններ ծագել: Բացի դրանից, չդեմ է որեւէ բան գնել դրա իրական արժեքից ցածր գնով:

Ռուսաստանում դատվերով սպառնությունների թիվը 1995 թ. աճել է 26 տոկոսով: Ժան-Ժակ Վոլայի կարծիքով, դրանք սովորական հավելեմատներ են, որոնք կաղ չունեն օտարերկրացի ներդրողների հետ: «Խոսքը մի խումբ ֆինանսիստների, գործարարների եւ դատաքննիչների մասին է, որոնք մասնակցում են Ռուսաստանի այսպես կոչված մեծ բաժանմանը», ասում է նա:

Ֆրանսիացի ձեռնարկատերը խոստովանում է, որ Մոսկվան հիշեցնում է 20 տարի առաջ Հնդկաստանը: Դրանք երկուսն էլ զարգացող դաշնային հանրապետություններ են: Ժան-Ժակ Վոլան կարողացել է հարմարվել Ռուսաստանի դայմաններին, նա շատ լսում է, բայց երբեք չի խոստանում այն, ինչ չի կարող կատարել: Երբ որեւէ նոր օրենք է ընդունվում, նա այն կատարում է բառացիորեն, իսկ եթե օրենսդրությունը բերի է, ձեռնդան է մնում: «Ռուսաստանում մինչեւ օրս սեփականությանը վերաբերող օրենք չկա, ասում է նա: Դուք կարող եք դառնալ ընկերության տնօրեն, բայց երբեք չեք լինի դատարի եւ հողատարածքի սեփականատեր: Եթե համենայնդեպս փորձեք որեւէ խանութ գնել, ճակատագրական կերդով կկորցնեք ձեր դրամը»: Ֆրանսիացի արդյունաբերողը օտարերկրացի ձեռնարկատերերին խորհուրդ է տալիս Ռուսաստանում որեւէ գործարանի ձեռքբերման դեպքում արտադրել միայն այն, ինչ նշված է, այլապես կարող են լուրջ բարդություններ ծագել: Բացի դրանից, չդեմ է որեւէ բան գնել դրա իրական արժեքից ցածր գնով:

Ռուսաստանում դատվերով սպառ-

ՀԱՄԱՌՈՏ

Իրաքը կնշի Պարսից ծոցի դատերազմի 5-րդ տարին

ԲԱՂԴԱԴ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ-ՌԼ: Իրաքի դաշտոնական մամուլը հայտարարեց, որ այս երկիրը դատրաստվում է նշել բոլոր ճակատամարտերի Մայր անվանումն ստացած Պարսից ծոցի դատերազմի 5-րդ տարեդարձը: Իրաքի երիտասարդական միությունը կազմակերդելու է երդ հազարավոր երիտասարդների մասնակցությամբ: Ամբողջ երկրով մեկ հնչելու է «Ալլահ ակբար» կարգախոսը: Մշակույթի նախարարությունը հատուկ տեղեկագիր է հրատարակել, որ նշվում է կազմակերդվող մի-ջոցառումների ժամանակացույցը:

Հ. Քլինթոնը վերադառնում է քաղաքական ասպարեզ

Շուտով ԱՄՆ-ում լույս կտեսնի Հիլարի Քլինթոնի նոր գիրքը, որը վերաբերում է երեխաների դաստիարակությունը: Դրանով Հիլարին նախադատրաստում է իր վերադարձը երկրի քաղաքական ասպարեզ: Առաջին տիկնոջ մտադիր է հանդես գալ կանանց, տարեց անձանց եւ գիտական վիճակի երեխաների առողջության դատասխանատվությամբ, որոնց իրավունքները նա ոտնահարված է համարում Ներկայացուցիչների դալատում եւ Սենատում հանրադետականների մեծամասնություն կազմելուց ի վեր:

«ԷՔՍՊՐԵՍ»

ԼԵՀԱՍՏԱՆ

Լեհ Վալենսան մտադիր է վերադառնալ Գդանսկի նավաշինարան՝ նախկին աշխատանքին

Էլեկտրիկի գործը կա ու կա

Լեհաստանի նախկին նախագահ Լեխ Վալենսան Վարշավայից մեկնել է Գդանսկ, որտեղ մտադիր է նավաշինարանում վերսկսել իր նախկին աշխատանքը: Ինչպես դարզվում է, Գդանսկի նավաշինարանի արտադրամասերից մեկի էլեկտրիկ Լեխ Վալենսան մի քանի տարի շարունակ գտնվել է չվճարվող արձակուրդում, բայց աշխատանքից ազատված չի եղել, եւ նրա անունն ադրաքվա դեռ նշվում է նավաշինարանի հաստիքներում: Երեկ գրեթե դուրսքշված Վալենսան իրոք վերադառնալու իր նախկին աշխատատեղը, սակայն իր երկու գործընկերների հետ կգրադվի էլեկտրասարքերի ու բեռնիչների վերանորոգմամբ: Ըստ դեռ նաեւ կուսակիցների լիազորվածքի: Արտադրամասի դետ Յանուշ Բարանովսկի խոսքերով նախկին նախագահն աշխատանքն սկսելու է առավոտյան ժամը 6-ին եւ ավարտելու է 14.15-ին: Լուսադրողների այն հարցին, թե ինչդես կընկալվի Վալենսայի վերադարձն արտադրամասում, 17 տարի նավաշինարանում աշխատող Եժի Յասինսկին դատասխանեց, որ ինքն արդեն կլինի, դատ ոչ նա իր գործընկերն է: Իրենք միասին աշխատել են 6 տարի: Աշխատանքը շատ է, ոչինչ չի փոխվել, նույնիսկ գործիքների դատահարանը:

Ինչ վերաբերում է նախկին նախագահի քինդարանիներին, նրանք կլինեն արտերկրյա վիճակում, դարտաճչյար քինդարանի աշխատավարձը էլեկտրիկի աշխատավարձից գրպանին բարձր է: Հենց դա է կասկածի տակ դնում Վալենսայի վերադարձը Գդանսկի հարազատ նավաշինարան: Բանն այն է, որ նախկին նախագահի առջեւ դրամական խնդիրների հետ կապված նորանոր բարդություններ են ծառանում: Նա ոչ միայն չի վճարել ամերիկյան կինոստուդիայից ստացած միլիոնանոց հոնորարի հարկը, այլեւ բախվել է մի նոր դժվարության: Ընտրողներից մեկը վերջերս հիշեցրեց Վալենսայի նախընտրական խոստումներից մեկը: Նախընտրական ժամանակ Լեխ Վալենսան իրեն սպասկող հարցերի դատասխանելիս [illegible] խոստացել էր վճարել մի քանի մեն [illegible] բոլոր նախագահի դատասխանը: Սակայն հարցը ընտրողը դատասխանությունն սկսեց եւ շահեց դատը: Այդ կարգի մի քանի հարցեր կարող են լիովին սնանկացնել նախագահի բնտանիքը: Այդ, Լեհաստանում դժվար է քաղաքական գործիչ լինել: Մեկ էլ տեսար հարեւան երկրներում էլ ընտրողներն սկսեցին դատասխան դատահանջել իրենց դեկավարներից:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«Գերմանական համայնքը գերմանական մշակույթի փոխանցողն է Հայաստանում»

Ներկայումս Հայաստանում ապրում է մոտ 1000 գերմանացի, որոնցից 300-ը Երեւանում գործող գերմանական համայնքի անդամներ են: Ինչպես «Նոյյան տարան» գործակալության թղթակցին հայտնեց Հայաստանում գերմանական համայնքի նախագահ Ա. Յասկորսկին, ազգությամբ գերմանացիների ճգտիս թիվը Հայաստանում դժվար է որոշել, քանի որ երկար տարիներ ապրելով խորհրդա-մասներից, փոխել են իրենց ազգությունն ու ձուլվել այն ազգերի հետ, որոնց մեջ ապրել են:

յումս նախկին խորհրդային հանրապետություններում ապրում են մոտ 2.5 մլն գերմանացիներ: Ա. Յասկորսկու խոսքերով Հայաստանի գերմանական համայնքն իր սկզբունքներով ու գործունեությամբ տարբերվում է ԱՊՀ մյուս երկրներում գոյություն ունեցող համայնքներից, ինչպես նաեւ Հայաստանում գործող մյուս ազգային փոքրամասնությունների համայնքներից: Հայաստանի գերմանական համայնքը գերմանացիների ազգային խնդիրներից բացի լեզվի ու մշակույթի վերակենդանացման ու պահպանման, հայրենիքի հետ կապերի ընդլայնման եւ այլն մեծ աշխատանք է կատարում նաեւ Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ կապերի ընդլայնման ուղղությամբ: Գերմանական համայնքի աշխատանքներին մասնակցում են ոչ միայն ազգությամբ գերմանացիներ, այլեւ բոլոր նրանք, ովքեր կապված են Գերմանիայի եւ նրա մշակույթի հետ:

Ըստ Ա. Յասկորսկու, Հայաստանում ապրող գերմանացիներն իրենց համարում են Հայաստանում գերմանական մշակույթի փոխանցողներ, բեւեռ նրա ոլորտներում, նրանցից շատերն իրենք ոգեւ է յուրացնեն իրենց մշակույթը: Այսօր համայնքի համար մեծ խնդիր է դարձել լեզվի վերականգնումը, քանի որ համայնքի անդամներ մեծ մասամբ ռուսալեզու են: Այդ նպատակով համայնքի կազմում գործող գերմանական մշակույթի կենտրոնում (DLKZ) կազմակերպվում են լեզվի դասընթացներ թե եւ Վանաձորում, Արտաշատում, Մարտունիում, Արթիկում, Աբովյանում, նախատեսվում է նաեւ բաժանմունքներ ստեղծել Գյումրիում, Եղեգնաձորում եւ Թումանյանի շրջանում:

Հայաստանի գերմանացիների մշակութային կենտրոնը համագործակցում է Գյոթեի անվան ինստիտուտի, Արտասահմանցի գերմանացիների օգնության միության, (VDA), Գերմանիայի Ակադեմիական-փոխանակման ծառայության (DAAD), մանկավարժների փոխանակման ծառայության (PAD) հետ եւ այլն:

Ա. Յասկորսկին հայտնեց, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից ներկայումս իրականացվում է մի ծրագիր, ըստ որի ոլորտ է ստեղծվելու նոր տիպի կրթական համալիրներ գերմաներենի խորացված ուսուցմամբ: Դրանք կլինեն մանկապարտեզներ, դպրոցներ, նախատեսված է նաեւ մասնագիտական ուսումնարան եւ գիմնազիա: Նման համալիրներ արդեն բացվել են Երեւանի թիվ 5 դպրոցում եւ Վանաձորի «Փյունիկ» մանկապարտեզում: Նախատեսվում է, որ 1996 թ. ին նման մի կրթական համալիր կբացվի նաեւ Երեւանի թիվ 159 դպրոցում:

«Մեր նպատակն է ոչ միայն հայաստանաբնակ գերմանացիներին մոտեցնել իրենց ազգային ակունքներին, այլեւ Հայաստանում տարածել եւ պրոպագանդել գերմանական մշակույթն ու լեզուն», ասաց Ա. Յասկորսկին:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒԲՈՅԱՆ

Բոյարսկու արձանը կարելի է դնել բանջարանոցում

Լոնդոնի հայտնի բանջարաններից մեկը մաղած Տյուդորի մոմե խանդակների բանջարանը Սանկտ Պետերբուրգի խորհրդարանին էր դիմել բարի ամենամոլեղական մարդու բեկ-

նածությանը ներկայացնելու խնդրանքով, որպեսզի նրա մոմե արձանը զարդարի Լոնդոնի այդ ֆաշարիան վայրը: Բարեմատնությանը որոշեց, որ դա, իրոք, Միխայիլ Բոյարսկին է, միայն թե դեռասանի արձանը ոչնչ է կերտեն ռուսաստանցի մասնագետներ: Լոնդոնցիներն համաձայնեցին: Բայց երբ Բոյարսկու մոմե արձանն հասավ լոնդոնյան բանջարան, այնտեղից հեռացրեց գրությունն ասացվեց. «Այս բանդակի տեղը ոչ թե բանջարանն է, այլ տանջարանոցը»:

«ՍՈՒԲԵԹՆԻԿ»

Աբովյանի մշակույթի կենտրոնը նոր մտահղացումներով, բայց առանց հովանավորի

**Քաղաքի մշակույթի պալատը իր գործունեությունը սկսել է 70 ական թվականների վերջին, իսկ մշակույթի կենտրոնը 1980 թվականին: 15 տարիների ընթացքում կենտրոնը միշտ էլ այլի է ընկել իր երգիչ կատարողներով, երգահաններով, ինքնուս ստեղծագործողներով: Նրանք բազմիցս մասնակցել են հանրապետական փառատոներին, մրցանակներ ու պատվոգրեր շահել: Իզուր չէ, որ Աբովյանը հանրապետությունում երաժշտասեր քաղաքի համբավ ունի: 1994 թվականից մշակույթի տան գեղարվեստական բաժնի վարիչ է Ասոս Առուստամյանը: Նա «Ակունք» ստեղծագործական միավորման գեղարվեստական ղեկավարն է եւ գործիքավորողը: Իսկ «Ակունքի» դոները միշտ բաց են ստեղծագործողների, երգիչների առաջ: Գործիքավորումը կատարվում է պրոֆեսիոնալ մակարդակով: Ունեն ձայնագրման ստուդիա: Շուտով իր գործունեությունը կսկսի նաեւ մշակույթի կենտրոնի ռոք խումբը: Պարբերաբար անց են կացվում բաստրական շոու ծրագրեր, փառատոներ: Վերջին 2 տարում Աբովյանում անց է կացվել 8 փառատոն, բոլորն էլ արժանացել են մրցանակների: Հայաստանի անկախության կապակցությամբ [illegible] համերգներ: Ա[illegible]կերդվել ես [illegible] ռաքիկայում կկայանա ռաքրոք [illegible] փառատոն, իսկ 1996 թ. անցկացվելիք փառատոնին կմասնակցեն նաեւ Շարենցավանի, Հրազդանի, Նաիրիի երգիչ կատարողներ: Առավել շնորհալիները կներկայացվեն նաեւ հեռուստատեսությամբ: Այո, գաղտնիք չէ, որ վերջին 2 տարում նոր թափ է առել «Ակունք» ստեղծագործական միավորումը: Եւ այդ ամենը Աշոտ Առուստամյանի տնաքաջ ջանքերի գնով: Բայց համեստ արվեստագետը միայն իր ուժերին ու կարողություններին չի վերագրում ձեռք բերած հաջողությունները: «Ինձ օգնում են հնչյունային ռեժիսոր Վան Սայադյանը, բեմի ինժեներ Էմիլ Ղարիբյանը եւ իմ բոլոր գործընկերները», ասում է նա: Մշակույթի բաստրախումբը, բացի շոու ծրագրերից, հանդես է գալիս նաեւ բաստրական ներկայացումներով, երգիծական մանրապատումային խաղերով: «Չկրակեք, խնդրում եմ», այսպես է վերնագրված վերջերս պատրաստված ներկայացումը, որի սցենարի հեղինակը Արտաշես Մեհրաբյանն է: Այն լավ ընդունվեց Աբովյանի բաստրաստեր հասարակայնության կողմից:

Վերջերս Ալավերդի քաղաքում կայացած հանրապետական 11 րդ փառատոնում այն լավագույն կին կատարողի (Անուշ Մարգսյան) եւ բեմայի արդիականության համար մրցանակ շահեց: Բոլոր աշխատանքներին աջակցում է քաղխորհրդի մշակույթի բաժնի վարիչ Արտաշես Մեհրաբյանը, որը նաեւ մշակույթի տան տնօրենի պաշտոնակատար է: Հետագա աշխատանքները ավելի պրոֆեսիոնալ հիմքերի վրա դնելու համար հովանավորի կարիք է զգացվում: Տեխնիկան հնամաշ է: Չնայած դժվարություններին, ստեղծագործական կոլեկտիվը նոր մտահղացումներ [illegible] հաջորդ տարվանից որոշել են երգերը ներկայացնել պրոֆեսիոնալ [illegible] մոնտաժներով: Մշակույթի կենտրոնն ունի պարբերական «Գեղարդ» (ղեկավար Ալբերտ Կիզիրյան) եւ մանկական (ղեկավար Արտաշես Հովհաննիսյան) խմբեր, իսկ նորաստեղծ տիկնիկային բաստրոնի ռեժիսորն է Պետրոս Մարտիրոսյանը: Գործում են նաեւ երաժշտական, ձեռնարվեստի խմբակներ: Նպատակադրվել են ստեղծել ուրախների եւ հնարամիտների ակումբ:

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Հաստատվել է Երեւանի պետական համալսարանի օրինադրությունը

ԵՐԵՎԱՆ, 17 ՅՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը հաստատել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Երեւանի պետական համալսարանի օրինադրությունը, ըստ որի ԵՊՀ-ը ինքնավար բարձրագույն ուսումնական, գիտական եւ մշակութային հաստատություն է: Օրինադրությամբ սահմանվում են համալսարանի խնդիրներն ու իրավունքները, կառուցվածքը, կառավարումը, ուսումնական եւ գիտական գործընթացի կազմակերպումը, գործունեությանը վերաբերող հարցեր: Լրացվությունը սաց վել է ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից:

Հայաստանի ֆիլհարմոնիկը վերադարձավ Իրանից

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը կիրակի՝ հունվարի 14 ին, վերադարձավ Իրանի Իսլամական Հանրապետությունից, ուր մեկնել էր մեկշաբաթյա համերգային շրջագայության: Թեհրանի ազգային օպերային թատրոնի բեմում կայացած 8 համերգներն անցել են լեփ-լեցուն դահլիճներում: Հեղափոխությունից հետո Հայաստանի ֆիլհարմոնիկն առաջին նվագախումբն է, որ հյուր է եղել պարսիկ երաժիշտներին: Նվագախումբը, որ ղեկավարել են մաեստրո Լորիս Ճգնավորյանը, իսկ 2 համերգ Ֆերեյդոն Նասերին, հնչեցրել է Չայկովսկու 4 րդ սիմֆոնիան, «Ռոմեո եւ Ջուլիետը», Ռախմանինովի «Վարիացիաներ Պագանինիի թեմաներով» (մենակատար Արմեն Բաբախանյան), Լ. Ճգնավորյանի «Ռուսան եւ Զոհրաբ» սյուիտը, Ա. Խաչատրյանի «Գայանե», «Դիմակահանդես», «Սպարտակ» բալետներից հատվածներ, թիվ 2 սիմֆոնիան: Հայաստանի ֆիլհարմոնիկի կատարմամբ հնչել է նաեւ Սանքարիի եւ Ֆերեյդոն Նասերիի ստեղծագործություններից:

ՀԱՐԾՈՒՄ

Ֆրենկ Սինատրան գլխավորում է լավագույն տասնյակը

Վերջերս ԱՄՆ ում հրապարակվել են հազար ամերիկացիների շրջանում անցկացված իրենց սիրելի կատարողների վերաբերյալ հարցման արդյունքները: Լավագույն տասնյակը գլխավորում է անկրկնելի Ֆրենկ Սինատրան, որն արդեն բոլորել է իր կյանքի ութերորդ տասնամյակը: Լավագույնների մեջ են նաեւ Ռիթքի Հյուստոնը, Բարբրա Սթրայզենդը, «Բիթլզը» եւ Մայքլ Ջեքսոնը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՇԱՆԿԱՐ

«Ոսկե գլոբուսը» 53-րդ անգամ կորոշի լավագույններին

Հունվարի 21 ին Լոս Անջելեսում 53 րդ անգամ անցկացվող «Ոսկե Գլոբուս» ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ մրցանակներ կտրվեն, ինչպես միշտ, բազմաթիվ կարգերում, որոնցից լավագույն ոլորտի համար որոշես թեկնածուներ ներկայացված են «Զգացում եւ զգացողություն», «Արիասիրտը» (Մել Գիբսոնի ղեկավարությամբ), «Ջրասամի ամպերի վրա», «Դոն Խուան դը Մարկո» (Ջոնի Դեպի դերակատարությամբ) եւ մուլտիպլիկացիոն «Պոկահոնտաս» ֆիլմերը, իսկ ֆիլմերում հնչող լավագույն երգ կարգի համար «Քամու գույներ» («Պոկահոնտաս» ֆիլմից, Վանեսա Ուիլյամսի կատարմամբ), «Դուք իսկապես երբեւէ մի կնոջ սիրե՞լ եք» («Դոն Խուան դը Մարկո» ֆիլմից, Բրայան Ադամսի կատարմամբ), «Գրկիր ինձ, հուզիր, համբուրիր, սպանիր ինձ» («Ընթրենն առիավեն» ֆիլմից, U2 ի կատարմամբ), «Լուսնի լույս» («Սաբրինա» ֆիլմից) եւ «Ես քո ընկերն եմ» («Խաղալիքի պատմություն» ֆիլմից) երգերը:

Համաշխարհային երաժշտական փառատոն՝ Լոս Անջելեսում

Հետաքրքիր մի նախաձեռնություն սկիզբ կառնի այս տարի Լոս Անջելեսում: Հունիսի 22 ին այնտեղ կբացվի առաջին Համաշխարհային երաժշտական փառատոնը: Հրավիրված մասնակիցներից առայժմ հայտնի են ներկայանալ Անիտա Բեյքերը, Կենի Լոգինզը, Ջոն Անդերսոնը («Ես» խմբից), Կիթարոն եւ մի քանի այլ երաժիշտներ:

«Գրեմի» մրցանակաբաշխությունում գերիշխելու են կանայք

Տարվա խոշորագույն երաժշտական իրադարձություններից «Գրեմի» մրցանակաբաշխությունը, որն այս տարի կանցկացվի 38 րդ անգամ, բացվելու է փետրվարի 28 ին Լոս Անջելեսում: 88 տարբեր կարգերում առաջադրված թեկնածուներից հայտնիներին ընտրելու է Ձայնագրման արվեստի եւ Գիտությունների ակադեմիայի 7000 անդամներից բաղկացած ժյուրին: Չնայած դեռ ժամանակ կա մինչեւ այդ պրոցեսը, սակայն արդեն իսկ ոլորտ է: Այդ օրը լինելու է կանանց գերիշխանության օր: Բացի [illegible] երգչուհի Ալանիս Մորիսեթից եւ դուդ վիրտուոզ Մարայա Քերիից, որոնք [illegible] թեկնածուներ ներկայացված են յուրաքանչյուր վեց տարբեր կարգերում, բազմաթիվ մրցանակներ [illegible] կան թեկնածություն ունեն նաեւ նորահայտ երգչուհի Ջոան Օզբորնը, երգիչ կոմպոզիտոր Բեյքի Ֆեյսը, եւ կոմպոզիտոր Գլեն Բալարդը: Բացի այդ Մայքլ Ջեքսոնը, Թի Էլ Սի Հիդ Հոպ ռոքի եռյակը, եւ կանադացի, քանքրի ռոքի երգչուհի Շանյա Թվենը ներկայացված են յուրաքանչյուր չորսական թեկնածության:

ԽՈՇԱՆԿԱՐԻ ԼՈՒՐԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ ԵՆ ԱՐՄԻՆԿՈՆ ԵՎ ԴԻՋ FM Ը

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՐԱՆՍԻԱ-98

Ընտրական մրցաշարը կսկսվի Հայաստան-Պորտուգալիա խաղով

Աշխարհի առաջնության եվրոպական 9-րդ խմբի մրցաշարի խաղացանկը հայտնի է

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Աշխարհի 1998 թ. առաջնության ընտրական փուլի եվրոպական 9-րդ խմբում ընդգրկված երկրների Գերմանիայի, Պորտուգալիայի, Հյուսիսային Իրլանդիայի, Ուկրաինայի, Ալբանիայի եւ Հայաստանի ֆեդերացիաների ներկայացուցիչների մասնակցությամբ Գերմանիայի Յոհանեսբուրգ քաղաքում տեղի ունեցած խորհրդակցությունում մշակվեց եւ հաստատվեց խմբային մրցաշարի խաղացանկը: Հայաստանն այդ խորհրդակցությունում ներկայացնում էր ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Պավել Խաչատրյանը: Դասակարգումը, որն ստանձնել է աշխարհի առաջնության եվրոպական ընտրական խմբերի մրցաշարերի անցկացման գործակալությունը, հաստատել էր այն ժամկետները, որոնց ընթացքում պետք է անցկացվեն մրցաշարերի տուրերը: Մասնավորապես 9-րդ խմբի համար, որտեղ ընդգրկված են 6 թիմեր, պետք է լինի 10 տուր, սակայն, քանի ՈՒԵՖԱ-ի ժամկետները հաստատված են 16 տուրի համար: Այսինքն խաղացանկը կազմելիս մասնակից երկրները հնարավորություն ունեն մաներեալ առաջադրված ժամկետների միջեւ: Ըստ ՈՒԵՖԱ-ի ներկայացված ժամկետների, եվրոպական ընտրական խմբերի մրցաշարերը կարող են սկսվել մարտի 26-ին կամ 27-ին, հաջորդ տուրը ապրիլի 23-ին, 3-րդը հունիսի 1-ին կամ 2-ին եւ այլն: Սակայն Ֆրանկֆուրտում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ 9-րդ խմբի ներկայացուցիչները որոշեցին մրցաշարն սկսել օգոստոսի 31-ին: Բարդությունը հիմնականում այն է, որ Ուկրաինայում դաժան ձմռան պատճառով հնարավոր չի սեփական հարկի տակ հանդիպումներ անցկացնել հոկտեմբեր-փետրվար ամիսներին: Ըստ խաղացանկի, Հայաստանի հավաքականը առաջին հանդիպումն անցկացնելու է սեփական հարկի տակ եւ 1996 թ. օգոստոսի 31-ին ընդունելու է մրցաշարի ֆավորիտներից մեկին Պորտուգալիայի հավաքականին: Առայժմ անհայտ է միայն Ուկրաինա-Հայաստան հանդիպման ճշգրիտ օրը, սակայն որոշվել է, որ այն անցկացվելու է 1997 թ. մայիսին: Դրա շուրջ կողմերը պետք է պայմանավորվեն լրացուցիչ: Ըստ խաղացանկի, Հայաստանի հավաքականն այս տարի անցկացնելու է 4 հանդիպում: Հոկտեմբերի 5-ին հյուրընկալվելու է Հյուսիսային Իրլանդիային, հոկտեմբերի 9-ին ընդունելու է աշխարհի եռակի չեմպիոն Գերմանիայի հավաքականին, իսկ նոյեմբերի 9-ին արտագնա խաղում մրցելու է Ալբանիայի հավաքականի հետ: Մրցաշարի մյուս 6 հանդիպումները մեր հավաքականն անցկացնելու է գալիք տարի:

Գերմանիայի հավաքականը մրցաշարին ներգրավվելու է Հայաստանի հավաքականի հետ երեք խաղով: Հիշեցնենք, որ եվրոպական 9 ընտրական խմբերում 1-ին տեղ գրաված թիմերն աշխարհի

«Օլիմպիկ» - Մարսել - Հայաստան հանդիպումից առաջ

16-րդ առաջնության եզրափակիչի ուղեգիր են ձեռք բերելու: 10-րդ ուղեգիր տրվելու է բոլոր այդ խմբերում 2-րդ տեղ գրաված թիմերից լավագույն արդյունք ունեցողին: Մնացած 4 ուղեգրերը վիճարկելու են խմբերում 2-րդ տեղ գրաված մյուս 8 թիմերը, որոնք, բաժանվելով զույգերի, 2 անգամ հանդիպելու են իրար հետ:

Ահա եվրոպական 9-րդ խմբի խաղացանկը.

31.08.96	Հս. Իրլանդիա-Ուկրաինա Հայաստան-Պորտուգալիա
05.10.96	Հս. Իրլանդիա-Հայաստան Ուկրաինա-Պորտուգալիա
09.10.96	Հայաստան-Գերմանիա Ալբանիա-Պորտուգալիա
09.11.96	Գերմանիա-Հս. Իրլանդիա Պորտուգալիա-Ուկրաինա Ալբանիա-Հայաստան
14.12.96	Հս. Իրլանդիա-Ալբանիա Պորտուգալիա-Գերմանիա
29.03.97	Հս Իրլանդ.-Պորտուգալիա Ալբանիա-Ուկրաինա
02.04.97	Ալբանիա-Գերմանիա Ուկրաինա-Հս. Իրլանդիա
30.04.97	Գերմանիա-Ուկրաինա Հայաստան-Հս. Իրլանդիա
07.06.97	Պորտուգալիա-Ալբանիա Ուկրաինա-Գերմանիա
20.08.97	Պորտուգալիա-Հայաստան Ուկրաինա-Ալբանիա Հս. Իրլանդիա-Գերմանիա
06.09.97	Գերմանիա-Պորտուգալիա Հայաստան-Ալբանիա
10.09.97	Գերմանիա-Հայաստան Ալբանիա-Հս. Իրլանդիա
11.10.97	Գերմանիա-Ալբանիա Հայաստան-Ուկրաինա Պորտուգալ.-Հս. Իրլանդիա

Այսպիսով, աշխարհի առաջնության վերոհիշյալ խաղացանկը չի խանգարի ՀՀ ֆուտբոլի բարձրագույն խմբի 1995-1996 թթ. ավարտուն առաջնության 2-րդ շրջանի անցկացմանը: Սակայն հարցն այն է, որ Հայաստանի ֆեդերացիան մինչ այդ կազմել էր մեր առաջնության խաղացանկը՝ ենթադրելով եւ ելնելով հաշվի առնելով, որ աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի խաղեր կնշանակվեն մարտի 26-ին կամ 27-ին, ապրիլի 23-ին, հունիսի 1-ին կամ 2-ին: Հայաստանի առաջնության խաղացանկը, որն արդեն տպագրվել է «Ազգում», հավանաբար վերանայվի եւ որոշ փոփոխություններ ենթարկվի:

Մնում է ավելացնել, որ Հայաստանի ազգային հավաքականը, որը ուսումնամարզական հավաք է անցկացնում Ֆրանսիայում, ստորգոդական հանդիպում է անցկացրել Մարսելի «Օլիմպիկ» թիմի խաղը կազմի հետ: Ըստ Հայաստանի ֆեդերացիայից ստացված տեղեկության, այդ հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի 1-1: Մեր թիմից գոլի հեղինակ է դարձել ազգային հավաքականի նորեկը Արթուր Քոչարյանը («Արարատ»): Կողմերի նախնական համաձայնությամբ հայտնի որոշելու համար նշանակվել են 11 մետրանոց հարվածներ: Բախտը ժպտացել է Հայաստանի հավաքականին: Երեկ Հայաստանի հավաքականը, ըստ պայմանավորվածության, պետք է մրցեր Մարոկկոյի հավաքականի հետ, որին սկսել է գլխավորել Ֆրանսիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Միշել Հիդալգոն, որի դեկավարությամբ ֆրանսիացիները 1984 թ. նվաճեցին Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

ՇԱԽՄԱՏ

Լինարես. վերջին տուրից առաջ

Իսպանական Լինարես քաղաքի մերձակայքում ընթացող շախմատի խոշոր միջազգային մրցաշարի նախավերջին ինններորդ տուրում առաջատարներին հետաքաղաքող Վլադիմիր Հակոբյանին, չնայած բոլոր ջանքերին, չհաջողվեց կոտրել կուբացի գրոսմայստեր Ռոման Հերնանդեսի դիմադրությունը: Այս ոչ-ոքիից հետո Հակոբյանը 6,5 միավորով 150 մասնակիցների մեջ գրավում է 5-րդ տեղը: Մեկ միավոր ավելին ունեն առաջատարները՝ խորվաթ Զդենկո Կոժուլը եւ բուլգարացի Վլադիմիր Դիմիտրովը: Վերջին տուրում Հակոբյանը սեւերով կխաղա Ուկրաինայի ներկայացուցիչ Օլեգ Ռոմանիշինի հետ:

Երեւանցի մյուս մասնակիցներից Սմբատ Լոռուսյանը հերթական տուրում հաղթեց, իսկ Անասասյանը դուրս տվեց: Այժմ այս երկու գրոսմայստերներն ունեն 5-ական միավոր:

Ա. Հ.

ՖՈՒՏԲՈԼ

Մոսկվայի «Դինամոյի» հաղթանակը

Ռուսաստանի առաջնությանը եւ խաղադրամատվող Մոսկվայի «Դինամոն», որն ուսումնամարզական հավաք է անցկացնում Բուլգարիայում, ստորգոդական խաղում 3-0 հաշվով հաղթեց Բուլգարիայի «Վիխրեն» թիմին:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի եւ Բուլգարիայի հավաքականներն ընդգրկված են աշխարհի առաջնության նույն ընտրական խմբում: Սոֆիայի «24 ժամ» թերթը գրում է, որ ռուսներն առաջարկել են աշխարհի առաջնության խմբային մրցաշարի 2 հանդիպումներ: Ռուսաստանի եւ Բուլգարիայի հավաքականների միջեւ անցկացնել 1997 թ. հոկտեմբերին: այս սիմն խմբային մրցաշարի վերջին տուրում: Իսկ Բուլգարիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դիմիտր Պենեւը, ըստ վերոհիշյալ թերթի, ասել է, որ Ռուսաստանի հավաքականի հետ հանդիպումը Սոֆիայում կայանա գարնանը: Փոխառու մարզիչն առաջարկել է նրանով, որ աշնանը ռուսներն լավ մարզավիճակում են լինում, իսկ գարնանը նրանց մոտ մրցաերաշրջանը նոր է սկսվում:

ԽԾԱՆԿԱՐ

Անգլիացուն պատիժ է սպասում

Անգլիական ֆուտբոլային գրոֆեսիոնալ լիգայի բժշկական հանձնաժողովի հայտարարած մարտի առաջին զոհը դարձավ «Օրիենս» թիմի խաղացող Ռոջեր Սանիսլավուսը: Նրան մեղադրանք է ներկայացվել, որ արգելված դեղամիջոց ներ է օգտագործել: Հետաքննության ժամանակ Ռոջեր Սանիսլավուսի օրգանիզմում կոկային եր պարունակվում: Ըստ լրագրողների, նրան խիստ պատիժ է սպասվում, սակայն ինչպիսին դեռ հայտնի չէ:

Խաղն ընդհատվեց

Թուրքիայի ֆուտբոլի առաջնության 13-րդ տուրում Վան քաղաքի «Վանսպոր» թիմը հյուրընկալել էր «Տրաբզոնսպոր» թիմին: Հանդիպումը կիսաս մնաց, քանի որ «Վանսպորի» երկրպագուները դժգոհելով «Տրաբզոնսպորի» խփած 2-րդ գոլերի համար, որոնք ըստ իրենց, մրցավարը չպետք է հաշվեր, սկսեցին քարեր նետել մրցավարի վրա: 85-րդ րոպեին խաղը ընդհատվեց:

ԹԵՆԻՍ

Շտեֆի Գրաֆֆի «գործին» խառնված է նաեւ մայրը

Մելբուռնում սկսվել է թենիսի «Մեծ սաղավարտի» ծրագրի մեջ մտնող տարվա 4 մրցաշարերից առաջինը՝ Ավստրալիայի բաց առաջնությունը, որին մասնակցում են աշխարհի գրեթե բոլոր ուժեղագույնները:

Տղամարդկանց մրցաշարի 1-ին փուլում անակնկալներ չգրանցվեցին, բոլոր տիտղոսակիրները հաջորդ փուլի ուղեգիր ձեռք բերեցին:

Գաբրիելա Սաբատինին

Աշխարհի թիվ 1 թենիսիստ Փիթ Սամփրասը (ԱՄՆ) հաղթեց Ռիչարդ Ֆրոմբերգին (Ավստրալիա), Տոդ Մարտինը (ԱՄՆ)՝ Դանիել Վագերին (Չեխիա), Անդրեյ Մեդվեդեւը (Կիեւ)՝ Կառլոս Նոյային (Իսպանիա), Գորան Իվանիշեւիչը (Խորվաթիա)՝ Բրանս Կարբախերին (Գերմանիա), Թոմաս Էնքվիստը (Շվեդիա)՝ Մարկ Բյոլներին (Գերմանիա), Սոնս Բեյը (Ֆրանսիա)՝ իր հայրենակից Գի Ֆորժեին, Ֆիլիպ դե Բուրը (Բելգիա)՝ Պոլ Հարմոսին (Հոլանդիա), Բորիս Բեքերը՝ Ռոսեցկուն: 2-րդ փուլ դուրս եկան նաեւ ամերիկացիներ Անդրե Ագասին, Մայքլ Չանգը, Ջիմ Կուրիեն, Մագնուս Լարսենը (Շվեդիա), Իվան Ֆերեյրան (Հարավաֆրիկյան Հանրապետություն), Եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան): Առաջին իսկ փուլում պարտություն կրեցին եւ ասպարեզը թողեցին Ռուսաստանի մյուս ներկայացուցիչներ Վոլկովը, Չեսնոկովը եւ Չերկասովը:

2-րդ փուլն սկսվեց անակնկալով: Իվան Ֆերեյրան զիջեց Կարլ Կույերին (Ավստրիա): Իսկ ահա Մայքլ Չանգը, որը մրցաշարում 5-րդ համարի տակ է նշված, հեշտությամբ հաղթեց թենիսի վետերան, 43 ամյա ավեցարացի Յակով Խլասեկին: Ցուցակի 8-րդ տեղում գտնվող Ջիմ Կուրիեն առավելության հասավ իր հայրենակից Ջեֆ Տարանգոյի նկատմամբ: Տոդ Մարտինը հաղթեց Ռիչարդ Ռեդերին:

Կանանց մրցաշարում նույնպես 1-ին փուլն անցավ առանց անակնկալների: Աշխարհի ուժեղագույն թենիսիստուհի Մոնիկա Սելեսը հեշտությամբ հաղթահարեց առաջին արգելքը. «Չնայած վերջին 4 մրցաշարերում ձեռք բերած հաջողություններին, դեռ մինչեւ վերջ ուշի չեմ եկել հանրահայտ դեռոի պատճառով անցկացրած սարսափելի եւ ծանր ամիսներից հետո, սակայն կարծում եմ, որ Մելբուռնում էլ գործերս հաջող կընթանան: Շատ ափսոս, որ մրցաշարին չի մասնակցում Շտեֆի Գրաֆը», հայտարարեց Մոնիկա Սելեսը: Իսկ Շտեֆի Գրաֆը Ավստրալիայի բաց առաջնությանը չի մասնակցում այն պատճառով, որ նոր տիաճուրյուններ են առաջացել հարկեր չվճարելու գործի կապակցությամբ: Պարզվել է, որ հորից բացի, որը հիմա բանտարկված է, սկանդալային այդ գործին խառնված է նաեւ Շտեֆի Գրաֆի մայրը: Գրաֆը շատ վրդովված է եւ բնականաբար Ավստրալիայի մրցաշարի մասին խոսք լինել չի կարող:

Ավելացնենք, որ Ավստրալիայի առաջնության 2-րդ փուլ են դուրս եկել նաեւ կանչիտա Մարտինեսը, Արանտա Սանչես Վիկարիոն, Անկե Հուբերը, ռուսաստանցի Ելենա Լիխովցեւան, որը հաջորդ փուլում խաղալու է աշխարհի 4-րդ ռակետի Ֆրանսուհի Մարի Պիրսի հետ, ինչպես նաեւ Գաբրիելա Սաբատինին, Մարի Ջո Ֆերնանդեսը:

Բանիցը վարում է
ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

«Ոչ, ես չեմ մահացել», ասում է Ռոժե Ռոշեն

ԳԵՎՈՐԳ ԱՍԱՐԵՍՅԱՆ

Վալանս, Ֆրանսիա

Մի քանի օր առաջ զարմանալի մի լուր տարածվեց Սենս Էտյենի քաղաքային ռադիոկայանով, որի համաձայն «Սենս Էտյեն» ֆուտբոլի թիմի հայտնի նախկին նախագահ Ռոժե Ռոշեն մահացել է: Մինչդեռ նույն ռադիոն Ռոժե Ռոշեն իր կնոջ հետ նստում էր բարեկամների տանը: «Դրեթե այս լուրը մենք լսեինք, ասում է «մահացած» Ռոժե Ռոշեն, սենք զարմացած իրար դեմ էինք նայեինք, եւ-ես ինքս ինձ պետք է կսմթեի հավոզելու համար, որ ողջ եմ»: Բայց շուտով հայտնի դարձավ, որ լուրը իրականությանը չի համապատասխանում եւ շփոթմունքի ու անհասկացողության հետեւանք է: Ահա լուրի պատմությունը: Ռոժե Ռոշեի տղան Ժերարը գնալով Սենս Էտյենի բերթերից մեկի խմբագրություն հայտարարում է, որ մահացել է իր կնոջ հայրը (անունը, որի անունը Ժան Լաուեր է եւ որը նախկինում ոլոմպիսիոնալ ֆուտբոլիստ էր: Ժամանակն ուշ լինելով բերթի խմբագրությունում մնացել էր միայն նկարիչներից մեկը, որը ճանաչելով Ժերարին եւ անուշադիր գտնվելով կարդալ էր, թե նրա հայրն է մահացել: Նկարիչը մի քանի ոտքն անց հանդիպելով լրագրողներին ասում է, որ Ժերար Ռոշեի հայրն է մահացել, իսկ վերջինս հայրը միայն Ռոժե Ռոշեն էր, այն էլ բոլորին հայտնի: Սենս Էտյենի բերթերը եւ մյուս ռադիոկայանները ժամանակ չկորցնելով նույնպես տարածում են կեղծ լուրը, առավել եւս, որ նրանցից մի քանիսը համոզվելու համար զանգահարել էին Ռոժե Ռոշեի տանը եւ պատասխանող չէր եղել, չմոռանալով, որ «հանգուցյալը» հանգիստ ճաշում է բարեկամների տանը: Բայց վաղ առավոտյան պարզվում է, որ Ռոժե Ռոշեն ողջ է, բոլորն անակնկալի են գալիս: Այսօր Ռոժե Ռոշեն ծիծաղում է իր «մահվան» լուրի առթիվ, բայց միաժամանակ զայրանում լրագրողների վրա, որ նրանցից որեւէ մեկը չի գրել ֆուտբոլի մասին վերջերս իր հրատարակած գրքի մասին. «Սուտ լուրը տարածած ամեն մի լրագրողին իմ գիրքը պետք է նվիրեմ համոզելու, որ ոչ միայն չեմ մահացել, այլեւ չափից ավելի առույգ եմ», ծիծաղելով ասում է «մահից եկած» Ռոժե Ռոշեն»:

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքերով

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍԱՄՈՒ

«Լուսանկարներ, որոնք կցնցեն աշխարհը». Թուրքիան խնայում է բարբարությունների հարցը

Անգլիական «Յորքշիրն» թերթի էջերում թուրք զինվորների կողմից գլխատված հրդեհի լուսանկարների հրապարակման վերաբերյալ լուսվությունը մեր թերթի երեկվա համարում տպագրելուց հետո խմբագրությունը Լոնդոնից ֆաքսի միջոցով ստացել է վերոհիշյալ շաբաթաթերթի վերջին հունվարի 11-17 թվակիր համարում լույս տեսած հոդվածի ողջունը, որտեղ. «Լուսանկարներ, որոնք կցնցեն աշխարհը» բնդհանուր խորագրի ներքո, հոդվածագիրը նշում է, որ Թուրքիան ողջունում է ամենաբարձր մակարդակներով հաստատել իր դեմ ներկայացված մեղադրանքները այն մասին, թե հարյուր աղջատամերձի դեմ մոտավորապես 12 ամիս ողջունի ընթացքում արդեն թուրք բարձրաստիճան բանակայիններ բարբարաբար են վերաբերվել հրդեհի հետ: Հետաքննություն սկսելու հայտարարությունը կատարել է Լոնդոնում Թուրքիայի դեսպան Օզդեմ Սանբերկն այն բանից հետո, երբ թերթը թուրքական իշխանություններին է տրամադրել լուսանկարների մի ամբողջ շարք, որից ամենանվազ սարսափելիները տպագրել է իր էջերում: Ենթադրվում է, որ այնտեղ զոհագործված բանակայիններ Հաքքարի լեռնային կոմանդոս բրիգադի անդամներ են: Դրանք հարավարևելյան Թուրքիայում հայտարարելյան Թուրքիայում հայտնաբերվել են իրենց ձեռքերում գլխատված հրդեհի գլուխներով:

Եվրախորհրդարանում մեծամասնության կազմող Սոցիալիստական խմբակցության առաջնորդ Պոլին Գրին նշել է, որ հարցն շատով կարող բարձրացնելու է Թուրքիայի հանդեպ Սուլեյման Դեմիրելի առաջ: «Այդ լուսանկարներում երևացող միջնադարյան բարբարությունը Թուրքիայի նկատմամբ խիստ անբարյացակամ վերաբերմունք է առաջացնելու ընթացքների շրջանում», ասել է նա:

Հանձնայնելով հանդերձ, որ լուսանկարները Թուրքիայում տեղի ունեցող հակամարտության թեթև ֆոն են տվել, Սանբերկն այնուամենայնիվ կոսկած է հայտնել, որ թուրք զինվորները նման վայրագությունների կարող են դիմել: «Ներկա փուլում այս լուսանկարները չեն կարող ապացուցել, որ զինվորները թուրքեր են: Անցյալում PKK-ի անդամ զինվորներ նման բարբարական արարքներ գործել են թուրք զինվորների հանդեպ», նշել է նա: Դեռ նույնիսկ հանձնայնել է այն մտքին, որ 20 տարի վերջում ողջակի անհանդուրժելի են այդ արարքները, եւ որ ամբաստանությունները «սասկիկ արտահայտում են» Թուրքիայի անունը: «Մենք շնորհակալ ենք «Յորքշիրն» թերթին 12 լուսանկարներից բաղկացած փաթեթը մեզ տրամադրելու համար», ասել է նա ավելացնելով, որ տեղեկությունն անմիջապես Անկարա է փոխանցվել հետագա քննությունների նպատակով:

PICTURES THAT WILL SHOCK THE WORLD

WARNING

The 'soldier' on the left is photographed holding the decapitated heads of two men. This picture is from a set showing scenes of horrific barbarity in the conflict between Turkey and Kurdish rebels. Some readers will find other pictures which appear on page 3 disturbing.

Turkey investigates barbaric killings

Շնորհավորում ենք Ամանորը եւ Սուրբ Ծնունդը

Թեհրանի «ԱԻՐԱ-ԹՈՒՐ» ֆիրման հանձինս տարեց Աբրահամ Միհրանյանը, շնորհավորում է բոլոր այն զբոսաշրջիկներին, որոնք իրենց ֆիրմայի միջոցով շրջագայել են Պարսկաստանում, ցանկանալով նրանց առողջություն, երջանկություն եւ հաջողություն անձնական կյանքում:

Միաժամանակ ֆիրման տեղեկացնում է, որ պատրաստ է առավել լավ սպասարկել 1996թ-ին, օժանդակել զբոսաշրջիկներին կահույքի, հագուստեղենի եւ այլի մատչելի գներով գնմանը եւ արտահով տեղ հասցնելուն:

Ցանկացողները կարող են դիմել՝ Զաֆիյան 78 հասցեով, հեռ. 52-67-23, 58-67-05, 56-47-07

Լույս է տեսել ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՈՒ

կողմից հրատարակվող ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳՐՔԻ 1995 թ. № 3 թողարկումը

Ցանկացողները տեղեկագիրը կարող են ձեռք բերել թերթի կրպակներից կամ «ՍՓՅՈՒՌ»-ի գրասենյակից:

Զանգահարել՝ 58 13 51, 58 91 67

SARDARAPAT Co. LTD

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՍՊԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ-ԵՐԵՎԱՆ

14 ՕՐ ԱՌԱՆՑ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ

7 ՕՐՎԱ ԳՐԱՎԻՉ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ-ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ-ԹԵՐՐԱՆ-ԵՐԵՎԱՆ

3 աստղանի հյուրանոց, Լիակատար Լիբանանի եւ Իրանի տեսարժան վայրեր, սնունդ, օրական 2 անգամ

Հասցեն՝ «Էրեբունի» հյուրանոց, 2-րդ մասնաճյուղ, 327 սենյակ 56.05.82 հեռախոսահամարով

INTERCOLLEGE

NICOSIA LIMASSOL LARNACA

Առաջարկում ենք ուսում Կիպրոսի Նիկոսիա, Լիմասոլ, Լարնակա քաղաքներում, լայն պրոֆիլի INTERCOLLEGE միջազգային համալսարանում: Ֆակուլտետները՝ տարրական բժշկություն, ընդհանուր բիզնես, տուկայագիտություն, տեղեկատվական համակարգերի կառավարում, իրավաբանություն, հաշվողական տեխնիկա, ծրագրավորում, մարդաբանություն, հյուրանոցների կառավարում, զբոսաշրջության կառավարում, զանգվածային լրատվության միջոցներ, դիզայն, գործավարություն:
Ինտերֆոնեցից կարելի է տեղափոխվել ԱՄՆ-ի, Անգլիայի եւ եվրոպական այլ երկրների առաջատար համալսարաններ:
Անգլերենի իմացությունը պարտադիր չէ (պարապմունքները կարելի է սկսել անգլերենի ուսումնասիրությունից): Տարիքը՝ 16 եւ ավելի:
Քոլեջ
Ֆակուլտետները՝ բիզնես, հյուրանոցների կառավարում, համակարգիչ: Տարիքը՝ 14-25:
Ուսանողների ընտանիքների անդամներին թույլատրվում է բնակվել Կիպրոսում:
Շեւակերպում ենք միջազգային օֆշորային առեւտրական ընկերությունների գրանցումը Կիպրոսում եւ աշխարհի բոլոր ազատ գոտիներում (բիզնես-տարագրություն):
Առաջարկում ենք նաեւ տուրիստական ուղեւորություններ դեպի Իրան, եվրոպական եւ ասիական երկրներ:
Մեր հասցեն՝ «Անի» հյուրանոց, 326 սենյակ, ֆիրմա «Գառնի 32»: Հեռ. 56-32-36, 594-326:

ԱՅԱՔՍ

ՖԻՐՄԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ

ՀՈՒՆՎԱՐԻ 29-ԻՆ — ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԱՄԵՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ — ՀԱԼԵՊ

ԷԿՋՈՏԻԿ ԴԵԼԻ

ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ՇԱՀԱՎԵՏ ԱՌԵՎՏՈՒՐ

ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ փ. 43/ա, հեռ. 531-573 560-334

«Պարբերական» հրատարակչության տպարան, երեւան 23, Աբովյանյան 2, Գրանցման թիվ 65, Դասից 69149, Պատվեր 207, Տպաքանակը՝ 3000, Կազմվել է տպագրության 17.01.1996, Գինը 75 դրամ

digitised by A.R.A.R.@